

Արտատպված է՝ Բ. Ա. Բունին, Վիպականեր և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ:

ԿՈՌՆԵՏ ԵԼԱԳԻՆԻ ԳՈՐԾԸ

Սարսափելի գործ էր դա՝ տարօրինակ, խորհրդավոր, անլուծելի գործ: Մի կողմից շատ պարզ էր, մյուս կողմից՝ շատ բարդ, նման էր բուլվարային վեպի,— բոլորն այն այդպես էլ կոչում էին մեր քաղաքում,— և միաժամանակ կարող էր հիմք դառնալ խորապես գեղարվեստական երկ ստեղծելու... Ընդհանուր առմամբ, ճիշտ ասաց դատապաշտպանը դատի ժամանակ:

— Այս գործի մեջ,— ասաց նա իր ճառի սկզբում,— կարծես վեճի տեղ չկա իմ և մեղադրանքի ներկայացուցիչի միջև. չէ որ մեղադրյալն ինքն է իրեն մեղավոր ճանաչել, չէ որ նրա հանցանքն ու նրա անձնավորությունը, այնպես, ինչպես և նրա գոհի անձնավորությունը, որի կամքին նա իբր բռնացել է, այս դահլիճում ներկաներից գրեթե բոլորին թվում են մի առանձին իմաստակության ոչ արժանի՝ իրենց իբր բավական սին և առօրեական լինելու պատճառով: Մակայն դա բնավ այդպես չէ, թվում է միայն այդպես, վիճելու և խորհրդածելու առիթները շատ և շատ են... Եվ այնուհետև.

— Ենթադրենք, թե իմ նպատակն է միայն ներողամտություն հարուցել մեղադրյալի հանդեպ: Այդ դեպքում ես կարող էի քիչ բան ասել: Օրենսդիրը չի նշում, թե հատկապես ինչով պետք է ղեկավարվեն դատավորները մեր դեպքին նման դեպքերում, նա մեծ ազատություն է տվել նրանց հասկացողությանը, խղճին և խորաթափանցությանը, որոնցով էլ ի վերջո պետք է գտնել սույն արարքը պատժող օրենքի այս կամ այն շրջանակը: Եվ ահա ես կջանայի ազդել այդ հասկացողության, այդ խղճի վրա, կաշխատեի առաջին տեղում դնել այն ամեն լավը, որ կա մեղադրյալի մեջ, և այն ամենը, ինչ մեղմացնում է նրա հանցանքը, որ կարող է բարի զգացումներ արթնացնել դատավորների մեջ և կանեի այդ ավելի նպատակամետորեն, քանի որ նա միայն մի բան է ժխտում իր արարքի մեջ՝ գիտակցական չար կամքը: Մակայն, անգամ այդ պարագային, կկարողանայի՞ արդյոք ես խուսափել մեղադրողի հետ վեճից, որը հանցագործին որակել է ոչ ավել ոչ պակաս, քան «քրեական գայլ»: Ամեն գործի մեջ էլ որևէ բան կարելի է ընկալել տարբեր կերպ, ամեն ինչ կարելի է լուսաբանել այս կամ այն կերպ, ներկայացնել յուրովի՝ այս կամ այն ձևով: Իսկ ի՞նչ ենք մենք տեսնում մեր դեպքում: Այն, որ, թվում է, այդ գործի մեջ չկա մի կետ, մի մանրամասն, որին ես և մեղադրողը նայեինք միանման, որ մենք կարողանայինք ասել, լուսաբանել միաբան. «այո, այդպես է, բայց և այդպես չէ»,— ամեն ինչ պետք է ասեմ ես նրան: Մակայն ամենակարևորն այն է, որ ամեն ինչ «բայց և այդպես չէ» գործի հենց բուն էության մեջ...

Սարսափելի էլ սկսվել է այն, այդ գործը:

Անցյալ տարվա հունիսի տասնինն էր: Վաղ առավոտ, ժամը վեցը, սակայն հուսարական գնդի լեյքզվարդիայի ռոտմիստր Լիխարյովի ճաշասենյակում արդեն լույս էր, տոթ, չոր և

շոգ քաղաքի ամառային արևից: Բայց և դեռ լռություն էր տիրում, մանավանդ որ ռոտմիստրի բնակարանը քաղաքից դուրս գտնվող հուսարական գորանոցների շենքերից մեկում էր: Եվ, օգտվելով այդ լռությունից ու նաև իր ջահելությունից, ռոտմիստրը խոր քնած էր: Սեղանին դրված էին լիկյորներ, կիսատ թողած սուրճով գավաթներ: Կողքի սենյակում, հյուրասենյակում, քնած էր ուրիշ սպա, շտաբռոտմիստր կոմս Կոշիցը, իսկ ավելի հեռու, աշխատասենյակում՝ կոռնետ Սևսկին: Մի խոսքով, սովորական մի առավոտ էր, սովորական մի պատկեր, սակայն, ինչպես միշտ, երբ սովորականի մեջ մի անսովոր բան է պատահում, այդպես սարսափելի, զարմանալի և ասես անհավատալի եղավ այն, ինչ հանկարծ պատահեց ռոտմիստր Լիխարյովի բնակարանում հունիսի 19-ի վաղ առավոտյան: Հանկարծ, այդ առավոտի լիակատար լռության մեջ, միջանցքում զնգաց զանգը, լսվեց, ինչպես զգուշորեն ու թեթև, ոտաբոբիկ վազեց դուռը բանալու սպասյակը, հետո լսվեց դիտավորյալ բարձր ձայնը.

— Տա՞նն է:

Նույնպիսի դիտավորյալ աղմուկով էլ ներս մտավ եկողը, հատկապես թափով բացելով ճաշասենյակի դուռը, հատկապես համարձակ դոփելով սապոզներն ու զրնգացնելով կոշկախթանները: Ռոտմիստրը բարձրացրեց զարմացած և քնատ դեմքը. նրա առջև կանգնած էր իր համագնդեցին, կոռնետ Ելագինը, փոքրամարմին մի մարդ, վտիտ, շիկակարմրավուն և պեպենոտ, ծուռ և զարմանալիորեն բարակ ոտներով, հագին շքեղ կոշիկներ, որ, ինչպես ինքը սիրում էր ասել, իր «գլխավոր» թուլությունն էր: Նա արագ հանեց ամառային շինեղը և, դիմացի պատի տակ դրված բազմոցին նետելով, ինքն էլ փլվեց բազմոցին՝ մեջքը հենելով և ձեռները դնելով գլխի տակ:

— Սպասիր, սպասիր,— մոթմոթաց ռոտմիստրը, աչքերը չռած հետևելով նրան.— որտեղի՞ց ես գալիս, քեզ ի՞նչ է պատահել...

— Ես սպանեցի Մանյային,— ասաց Ելագինը:

— Հարբա՞ծ ես: Ի՞նչ Մանյա,— հարցրեց ռոտմիստրը:

— Դերասանուհի Մարիա Իոսիֆովնա Սոսնովսկայային:

Ռոտմիստրը ոտքերը բազմոցից իջեցրեց:

— Լսիր, դու կատա՞կ ես անում:

— Ավա՛դ, դժբախտաբար, իսկ գուցե, բարեբախտաբար, բնավ:

— Ո՞վ է այդտեղ: Ի՞նչ է պատահել,— բղավեց կոմսը հյուրասենյակից:

Ելագինը ձգվեց և ոտքի թեթև հարվածով բացեց դուռը:

— Մի բղավի,— ասաց նա:— Ես եմ, Ելագինը: Ես ատրճանակով սպանեցի Մանյային:

— Ի՞նչ,— ասաց կոմսը և, մի պահ լռելով, հանկարծ սկսեց քրքջալ:— Ա՛, ահա թե ինչ,— բղավեց նա ուրախ:— Էհ, գրողը քեզ տանի, այս անգամ ներում ենք: Լավ է, որ

արթնացրիր, թե չէ անպայման քնած էինք մնալու, երեկ նորից մինչև ժամը երեքը քեֆ ենք արել:

— Ճիշտ եմ ասում, սպանել եմ,— համառորեն կրկնեց Ելագինը:

— Փչում ես, եղբայր, փչում ես,— բղավեց տանտերը՝ գուլպան ոտքին քաշելով:— Ես էլ քիչ էր մնում վախենայի, թե չլինի հանկարծ իսկապես... Եֆրե՛մ, թեյ:

Ելագինը ձեռքը տարավ շալվարի գրպանը, հանեց մի փոքրիկ բանալի և, ուսի վրայով ճարպկորեն նետելով սեղանին, ասաց.

— Գնացեք, ինքներդ տեսեք...

Դատի ժամանակ դատախազը շատ էր խոսում Ելագինի դրամայի որոշ տեսարանների ցինիզմի և սարսափելիության մասին, քանիցս շեշտեց և այս տեսարանը: Նա մոռացել էր, որ այդ առավոտ ռոտմիստը Լիխարյովը միայն առաջին պահին չէր նկատել Ելագինի, ինչպես նա ասաց, «գերբնական» գունատությունը և ինչ-որ «անմարդկային» բան նրա աչքերի մեջ, իսկ հետո, «պարզապես ցնցվել էր և մեկից, և մյուսից»...

2

Եվ այսպես, ահա թե ինչ պատահեց անցյալ տարվա հունիսի տասնիննի առավոտյան:

Կես ժամից կոմս Կոշիցը և կոռնետ Սևակին արդեն գտնվում էին այն տան շքամուտքում, ուր բնակվում էր Սոսնովսկայան: Հիմա արդեն դա կատակ չէր նրանց աչքին:

Կառապանի հոգին հանեցին արագ քշել տալով, կառքից շտապով դուրս թռան, բանալին էին մտցնում փականքի անցքը, զանգ էին տալիս կատաղի, սակայն բանալին անցքի մեջ չէր մտնում, իսկ դռան ետև լռություն էր: Համբերությունից դուրս գալով, արագ գնացին բակ, սկսեցին որոնել բակապանին: Սա ետնամուտքից խոհանոց վազ տվեց և ետ գալով ասաց, որ Սոսնովսկայան, սպասուհու ասելով, տանը չի գիշերել, դեռ երեկ իրիկվանից գնացել է հետը ինչ-որ փաթեթ վերցրած: Կոմսը և կոռնետը շփոթվեցին: Ի՞նչ պիտի անեն այս դեպքում: Մի քիչ մտածելով, ուսները թոթվելով, նստեցին և գնացին զորամաս, բակապանին հետներն առած: Զորամասից զանգ տվեցին ռոտմիստը Լիխարյովին: Ռոտմիստը կատաղած բղավեց լսափողի մեջ.

— Այս ապուշը, որին արդեն չգիտեմ ինչ անեմ, մոռացել է ասել, որ պետք է ոչ թե այդ կնոջ տուն գնայիք, այլ իրենց սիրային որջը. Ստարոգրադսկայա, 14: Լսո՞ւմ եք:

Ստարոգրադսկայա, 14: Փարիզյան ամուրի տղամարդու բնակարանի նման մի բան է, մուտքը հենց փողոցից...

Սլացան Ստարոգրադսկայա:

Բակապանը նստեց կառապանի նստիքին, թաղայինը, զուսպ անկախությամբ, նստեց կառքի մեջ, սպաների դիմաց: Շոգ էր, փողոցները մարդաշատ և աղմկոտ, ու դժվար էր հավատալ, որ այդպիսի արևոտ և զվարթ առավոտ ինչ-որ մեկը կարող է պառկած լինել

մեռած, և ամենաանըմբռնելին այն էր, որ դա արել էր քսաներկուամյա Սաշկա Ելագինը: Ինչպե՞ս էր նա սիրտ արել: Ինչի՞ համար էր նրան սպանել, ինչո՞ւ և ինչպե՞ս էր սպանել: Ոչինչ հնարավոր չէր հասկանալ, հարցերը մնում էին անպատասխան:

Երբ վերջապես կանգ առան Ստարոգրադսկայայի վրա գտնվող հին, անհրապույր երկհարկանի տան առջև, կոմսը և կոռնետը, իրենց բառերով ասած՝ «լրիվ ընկճվել էին»: Մի՞թե դա այստեղ է, և մի՞թե դա պետք է տեսնել, թեև ուզում են տեսնել, անդիմադրելի կերպով ձգտում են: Իսկ թաղայինն անմիջապես դարձավ խիստ, գործնական և վստահ:

— Խնդրեմ բանալին,— չոր և անառարկելի ասաց նա, և սպաները շտապեցին նրան տալ բանալին նույն երկշոտությամբ, ինչպես դա կաներ բակապանը:

Տան առջև դարպաս էր, ներսում երևում էր փոքրիկ բակը և մի փոքրիկ ծառ, որի կանաչը անբնականորեն վառ էր կամ էլ այդպես էր թվում մուգ գորշավուն քարե պատերի պատճառով: Իսկ դարպասից դեպի ձախ գտնվում էր հենց այն խորհրդավոր դուռը, ուղիղ փողոց դուրս եկող, որ պետք էր բացել: Եվ ահա թաղայինը, դեմքը խոժոռելով, բանալին մտցրեց անցքը, դուռը բացվեց, և կոմսն ու կոռնետը տեսան բոլորովին մութ միջանցքի նման մի բան: Թաղայինը ասես բնագողով կռահելով, թե որտեղ պետք է որոնել, ձեռքն առաջ մեկնեց, պատի վրա սահեցրեց և լուսավորեց նեղիկ մոայլ սենյակը, որի խորքում, երկու բազկաթոռների արանքում դրված էր փոքրիկ սեղան՝ վրան ափսեներ որսամսի և մրգերի մնացորդներով: Սակայն է՛լ ավելի մոայլ էր այն, ինչ ներկայացավ ներս մտնողների աչքերին հետո: Միջանցքի աջ կողմի պատին մի փոքրիկ մուտք կար դեպի կողքի սենյակը, նույնպես բոլորովին մութ, մոայլ լուսավորված առաստաղից կախված ծիածանագույն լապտերով, սև մետաքսե մեծ հովանոցաձև լուսամփոփի տակ: Վերից վար ինչ-որ սև բանով էին պաստառված այդ սենյակի և բոլոր պատերը, խուլ, անպատուհան: Այստեղ էլ խորքում դրված էր մեծ և ցածր թուրքական բազմոց, իսկ բազմոցի վրա, միայն գիշերանոցով, աչքերը և շրթունքները կիսաբաց, գլուխը կրծքին կախ գցած, վերջավորությունները ձգած, ոտքերը մի քիչ իրարից հեռու պառկած էր հազվագյուտ գեղեցկության մի ջահել կին:

Եվ ներս մտնողները կանգ առան ու մի պահ քարացան սարսափից ու զարմանքից:

3

Հանգուցյալի գեղեցկությունը հազվագյուտ էր այն պատճառով, որ զարմանալիորեն բավարարում էր բոլոր պահանջներին, որ իրենց առջև դնում են, ասենք, իդեալական գեղեցիկ կանայք պատկերող մոդայիկ նկարիչները: Այս դեպքում առկա էր այն ամենը, ինչ պահանջվում էր. գեղեցիկ կազմվածք, մարմնի գեղեցիկ գույն, փոքրիկ և առանց մի թերության ոտք, մանկականորեն անմեղ սքանչելի շրթունքներ, մանրիկ և գեղեցիկ դիմագծեր, հրաշալի մազեր... Եվ այդ բոլորը հիմա մեռած էր, այդ ամենը սկսել էր քարանալ, խամրել, և գեղեցկությունը մահացածին դարձնում էր ավելի սարսափելի: Նրա մազերը հարդարված էին, սանրվածքը կարգին, թեկուզ պարահանդեսի պատրաստ: Գլուխը դրված էր բազմոցի բարձրացված բարձիկին, և կզակը թեթևակի դիպչում էր

կրծքին, որ նրա կանգ առած կիսաբաց աչքերին և ամբողջ դեմքին տալիս էր մի փոքր շվարած արտահայտություն: Եվ այդ ամենը տարօրինակ լուսավորում էր առաստաղից կախված ծիածանագույն լապտերը՝ հսկայական սև հովանոցաձև լուսամփոփի խորքից, որ նման էր մեռյալի վրա իր թաղանթաթևերը տարածած ինչ-որ գիշատիչ թռչունի:

Մի խոսքով, տեսարանը ցնցեց նույնիսկ թաղայինին: Հետո բոլորը երկյուղով սկսեցին ավելի մանրամասն նայել մահացածին:

Հանգուցյալի գեղեցիկ մերկ թևերը ուղիղ ձգված էին մարմնի երկայնությամբ: Նրա կրծքին, գիշերանոցի ժանյակների մեջ Ելագինի երկու այցետոմսն էր, իսկ ոտքերի մոտ հուսարական սուրը, որ շատ կոպիտ երևույթ ուներ կանացի մերկության կողքին: Կոմսն ուզեց վերցնել սուրը, որպեսզի պատյանից հանի անհեթեթ այն մտքով, թե արդյոք արյան հետքեր չկա՞ն: Թաղայինը նրան ետ պահեց սույն անօրինակ արարքից:

— Ահ, իհարկե, իհարկե, — շշուկով մոթմոթաց կոմսը, — իհարկե, առայժմ ոչինչ չի կարելի ձեռք տալ: Բայց ինձ զարմացնում է, որ ոչ մի տեղ չեմ տեսնում ոչ արյուն, ոչ էլ հանցագործության որևէ հետք: Հավանաբար, թունավորո՞ւմ է:

— Համբերություն ունեցեք, — խրատական ասաց թաղայինը, — սպասենք քննիչին և բժշկին: Սակայն, անշուշտ, նման է թունավորման...

Եվ իսկապես նման էր: Արյուն ոչ մի տեղ չկար՝ ոչ հատակին, ոչ բազմոցին, ոչ մարմնին, ոչ էլ հանգուցյալի գիշերանոցի վրա: Բազմոցի մոտի բազկաթոռին ընկած էին կանացի վարտիքն ու պենյուարը, դրանց տակ երկնագույն սաղափի երանգով շապիկը, մուգ մոխրագույն ընտիր կտորից շրջագգեստը և մետաքսե մոխրագույն ամառային թեթև վերարկուն: Այդ ամենը հենց այնպես թափթփված էր բազմոցին, բայց նույնպես ոչ մի կաթիլ չէր արյունոտվել: Թունավորման գաղափարը հաստատում էր և այն, ինչ հայտնաբերվեց բազմոցի գլխին պատի ելուստի վրա. այդ ելուստին, շամպայնի շշերի և խցանների, վառված մոմի մնացորդների և կանացի հերակալների, գրոտած և պատռոտած թղթի կտորների միջև դրված էր կիսատ խմված պորտերով¹ մի բաժակ և մի փոքրիկ սրվակ, որի սպիտակ պիտակին չարագուշակ սևին էր տալիս «Op pulv»:

Բայց հենց այն պահին, երբ թաղայինը, կոմսը և կոռնետը հերթով կարդում էին այդ լատիներեն բառերը, փողոցից լսվեց քննիչին և բժշկին բերող կառքի աղմուկը, և մի քանի րոպեից պարզ դարձավ, որ Ելագինը ճիշտ էր ասում. Մոսնովսկայան իսկապես սպանված էր ատրճանակով: Արյան հետքեր գիշերանոցի վրա չկային: Սակայն գիշերանոցի տակ սրտի շրջանում գտան արնագույն հետք, իսկ մեջտեղում կլոր, այրված եզրերով վերքը, որից ջրիկ մուգ արյուն էր ծորում և ոչինչ չէր կեղտոտել այն պատճառով, որ վերքը փակված էր գունդ արած թաշկինակով...

Ուրիշ ի՞նչ պարզեց բժշկական փորձաքննությունը: Քիչ բան. այն, որ հանգուցյալի աջ թոքի մեջ կան թոքախտի հետքեր, որ կրակել են դիմահար և մահը տեղի է ունեցել վայրկենական, թեև հանգուցյալն, այնուամենայնիվ, կարող էր կրակոցից հետո մի քանի

¹ Պորտեր — գարեջրի տեսակ (ծթ.):

բառ ասել, որ մարդասպանի և նրա զոհի միջև պայքար չի եղել, որ կինը խմել է շամպայն և պորտերի հետ ընդունել փոքր քանակությամբ (թունավորվելու համար ոչ բավարար) ափիոն, և, վերջապես, որ նա այդ ճակատագրական գիշերը հարաբերություն է ունեցել տղամարդու հետ...

Բայց ինչո՞ւ, ինչի՞ համար է այդ տղամարդը նրան սպանել: Ելագինը, ի պատասխան այդ հարցին, համառորեն պնդում էր, որ նրանք երկուսն էլ՝ և ինքը, և Սոսնովսկայան, «ողբերգական վիճակում» էին, որ նրանք, մահից բացի, ուրիշ ելք չէին տեսնում այդ վիճակից, և որ սպանելով Սոսնովսկայային, ինքը սոսկ նրա հրամանն է կատարել: Սակայն դրան կարծես բոլորովին հակասում էին հանգուցյալի մահից առաջ գրած երկտողերը: Չէ որ նրա կրծքի վրա գտել էին Ելագինի երկու այցետոմսերը՝ հանգուցյալի ձեռքով լեհերեն գրոտված (ի դեպ, բավական անգրագետ): Մեկի վրա գրված էր.

— Գեներալ Կոնովնիցինին, թատրոնի վարչության նախագահին: Բարեկամս: Շնորհակալ եմ քեզնից մի քանի տարվա ազնիվ բարեկամության համար... Վերջին ողջույնս եմ հղում և խնդրում եմ մորս տալ իմ վերջին ելույթներ համար հասնող ամբողջ դրամը...

Մյուսի վրա.

— Այդ մարդը ճիշտ արեց՝ սպանելով ինձ... Մայր, ինձ դժբախտ: Ներողություն չեմ խնդրում, քանի որ մահանում եմ ոչ իմ սեփական կամքով... Մայր: Մենք կտեսնվենք... այնտեղ, վերևում... Զգում եմ, սա վերջին պահն է...

Նույնպիսի այցետոմսերի վրա Սոսնովսկայան մահից առաջ արել էր և իր մյուս գրառումները: Դրանք թափթփված էին պատի ելուստին մանրիկ պատռտված: Կտորտանքը հավաքեցին, դասավորեցին, իրար կպցրեցին և կարդացին հետևյալը.

— Այդ մարդը պահանջում էր իմ և իր մահը... Ես ողջ դուրս չեմ պրծնի...

— Այսպես, հասել է իմ վերջին ժամը... Տե՛ր իմ, ինձ մի լքիր... Իմ վերջին միտքն է՝ մայրս և սուրբ արվեստը...

— Անդունդ, անդունդ: Այդ մարդն իմ ճակատագիրն է... Տե՛ր իմ, փրկիր և օգնիր... Եվ, վերջապես, ամենաանհասկանալին.

— Quand même pour toujours...²

Բոլոր այդ գրառումները, ինչպես այն, որ գտնվել էին հանգուցյալի կրծքի վրա ամբողջական վիճակում, և մյուսները, որ պատռտված գտել էին պատի ելուստին, կարծես հակասում էին Ելագինի պնդումներին: Սակայն բանն էլ այն է, որ «կարծես»: Ինչո՞ւ պատռտված չէին և այն երկու այցետոմսերը, որ դրված էին Սոսնովսկայայի կրծքին և որոնցից մեկի վրա գրված էին Ելագինի համար ճակատագրական բառերը. «Մահանում եմ ոչ իմ սեփական կամքով»: Ելագինը դրանք ոչ միայն չէր պատռել ու չէր տարել հետը, այլև ինքը (որովհետև ուրիշ էլ ո՞վ կարող էր այդ անել) դրել էր ամենաաչքի ընկնող

² Եվ սակայն, հավետ... (Ֆր.)

տեղում: Նա դրանք չէր պատռտել շտապելով: Շտապելուց նա, իհարկե, կարող էր մոռանալ դրանք պատռտել: Սակայն ինչպե՞ս կարող էր նա շտապելուց հանգուցյալի կրծքին դնել իր համար այդքան վտանգավոր գրառումները: Եվ, ընդհանրապես, շտապել էր արդյոք նա: Ոչ, նա կարգի էր բերել մահացածին, ծածկել էր գիշերանոցով, նախապես վերքը փակելով թաշկինակով, հետո ինքն էր իրեն կարգի բերել, հագնվել... Ոչ, այս դեպքում դատախազն իրավացի է: Նա այդ արել էր ոչ շտապելով:

4

Դատախազն ասում էր.

—Կան երկու կարգի հանցագործներ: Առաջինը պատահական հանցագործներն են, որոնց հանցագործությունները հետևանք են հանգամանքների չարաքաստիկ բերման և ջղայնության, որ գիտականորեն կոչվում է «կարճատև խելահեղություն»: Եվ երկրորդ, այն հանցագործները, ովքեր իրենց կատարածը կատարում են չար և կանխամտածված դիտավորությամբ: Դրանք հասարակության և հասարակական կարգի բնածին թշնամիներն են, դրանք քրեական գայլերն են: Ուրեմն ո՞ր կարգին մենք պետք է դասենք մեր առջև մեղադրյալի աթոռին նստած մարդուն: Անշուշտ, երկրորդ կարգին: Նա, անկասկած, քրեական գայլ է, նա հանցագործություն է կատարել այն պատճառով, որ գազանացել է պարապ և սանձարձակ կյանքից:

Այդ երկարաշունչ ճառը բավական տարօրինակ է, (թեև արտահայտում է Ելագինի մասին մեր քաղաքի գրեթե ընդհանուր կարծիքը) և տարօրինակ է առավել քան այն պատճառով, որ Ելագինը դատարանում ամբողջ ժամանակ նստած էր գլուխը ձեռքերին դրած, ժողովրդից երեսը ծածկելով, և բոլոր հարցերին պատասխանում էր ցածրաձայն, ընդհատուն, մի տեսակ մարդու հոգին տակնուվրա անող վեհերոտությամբ և թախծով: Եվ սակայն, դատախազը իրավացի էր նաև. մեղադրյալի աթոռին նստած էր բնավ ոչ սովորական հանցագործ և բնավ ոչ բռնված «կարճատև խելահեղությամբ»:

Դատախազը երկու հարց դրեց. առաջինը, բնականաբար, այն հարցը, թե արդյոք հանցագործությունը կատարված է աֆեկտի՞, այսինքն գերջղային վիճակում, և երկրորդը, թե արդյոք չի՞ եղել սպանության ակամա մղում, և երկու հարցին էլ լիակատար համոզվածությամբ պատասխանեց՝ ոչ և ոչ:

— Ոչ,— ասաց նա, պատասխանելով առաջին հարցին,— որևէ աֆեկտի մասին խոսք իսկ չի կարող լինել, ու նախ և առաջ այն պատճառով, որ աֆեկտները մի քանի ժամ չեն տևում: Եվ հետո, ի՞նչը պիտի աֆեկտի հասցնե՞ր Ելագինին:

Այս վերջին հարցը լուծելու համար դատախազը բազմաթիվ մանր-մունր հարցեր էր տալիս ինքն իրեն և տեղնուտեղը ժխտում էր կամ նույնիսկ ծաղրում այդ բոլորը: Նա ասում էր.

— Ելագինը ավելի շատ չէ՞ր խմել այդ ճակատագրական օրը: Ոչ, նա ընդհանրապես շատ էր խմում, իսկ այդ օրը խմել էր սովորականից ոչ ավելի:

— Առո՞ղջ մարդ է եղել, և առո՞ղջ է մեղադրյալը: Միանում եմ նրան հետազոտած բժիշկների կարծիքին. միանգամայն առողջ, սակայն մարդ, որ բնավ սովոր չէ իրեն զսպելու:

— Կարո՞ղ էր այդ աֆեկտը առաջանալ իր և իր սիրած կնոջ ամուսնության անհնարին լինելու պատճառով, եթե, իհարկե, ընդունենք, որ նա իսկապես սիրում էր այդ կնոջը: Ոչ, որովհետև մենք ստույգ գիտենք. մեղադրյալը չի էլ մտածել, բացարձակապես ոչ մի քայլ չի արել այդ ամուսնության ուղղությամբ:

Եվ այնուհետև.

— Արդյոք այդ աֆեկտը չի՞ առաջացել առաջիկայում Սոսնովսկայայի արտասահման մեկնելու պատճառով: Ոչ, որովհետև նա վաղուց գիտեր այդ մեկնումի մասին:

— Այն դեպքում գուցե նրան աֆեկտի վիճակի է հասցրել Սոսնովսկայայից բաժանվելը՝ միտքը, մեկնումի հետևանքով բաժանվելու: Դարձյալ ոչ, որովհետև բաժանումի մասին մի հազար անգամ խոսել էին և մինչ այդ գիտեր: Իսկ եթե այդպես է, ուրեմն սա ի՞նչ է ի վերջո: Խոսակցությունն է՞ր մահվան մասին: Մենյակի զարհուրելի մթնոլորտը, նրա այսպես ասած, կախարդանքը, ճնշող ազդեցությունը, ինչպես և ողջ այդ հիվանդագին ու սարսափելի գիշերվա ճնշող ազդեցությունն ընդհանրապես: Բայց ինչ վերաբերում է մահվան մասին խոսակցություններին, ապա դրանք ոչ մի կերպ նորություն չէին կարող լինել Ելագինի համար. նրա և նրա սիրածի միջև այդ խոսակցությունները միշտ կային և, իհարկե, վաղուց արդեն ձանձրացրել էին նրան: Իսկ կախարդանքի մասին խոսել պարզապես ծիծաղելի է: Չէ որ այն միանգամայն չափավորվում էր շատ սովորական բաներով. ընթրիքով, այդ ընթրիքի մնացորդներով, շշերով և նույնիսկ, ներեցեք, գիշերանոթով... Ելագինը ուտում էր, խմում, իր բնական պահանջներն էր կատարում, գնում էր մյուս սենյակ՝ մեկ գինի բերելու, մեկ դանակ, որ մատիտը սրի...

Եվ դատախազն ամփոփեց այսպես.

— Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե Ելագինի կատարած սպանությունը հանգուցյալի կամքի կատարո՞ւմ էր արդյոք, ապա այստեղ երկար մտածելու բան չկա. այդ հարցի լուծման համար մենք ունենք Ելագինի անապացույց հավաստիացումները, իբր Սոսնովսկայան ինքն է խնդրել նրան, որ իրեն սպանի, և Ելագինի համար միանգամայն ճակատագրական երկտողը Սոսնովսկայայի. «Մահանում եմ ոչ իմ կամքով»...

5

Շատ բան կարելի էր առարկել դատախազի ճառի մասնավոր որոշ հարցադրումներին: «Մեղադրյալը միանգամայն առողջ մարդ է»... Բայց որտե՞ղ է սահմանը առողջության և անառողջության, նորմալության և աննորմալության միջև: «Նա ոչ մի քայլ չի արել

ամուսնության ուղղությամբ...»: Սակայն չէ՞ որ նա այդ քայլերը չի արել, առաջինը, որովհետև հաստատապես համոզված է եղել դրա բացարձակ ապարդյունությանը, և, երկրորդ, մի՞թե սերը և ամուսնությունը այդքան սերտորեն կապված են իրար հետ և մի՞թե Ելագինը կհանգստանար և, ընդհանրապես, ամեն առումով լուծում կտար իր սիրտ դրամային, եթե ամուսնանար Սոսնովսկայայի հետ: Մի՞թե հայտնի բան չէ, որ ամեն մի ուժեղ և ընդհանրապես ոչ սովորական սիրուն տարօրինակ կերպով հատուկ է նույնիսկ կարծես խուսափել ամուսնությունից:

Սակայն այդ բոլորը, կրկնում եմ, մասնավոր բաներ են: Իսկ հիմնականում դատախազն իրավացի էր. աֆեկտի վիճակ չէր եղել:

Նա ասում էր.

— Բժշկական փորձագիտությունը եկավ այն եզրակացության, որ Ելագինը «ավելի շուտ» հանգիստ վիճակում էր, քան աֆեկտի, իսկ ես պնդում եմ, որ ոչ միայն հանգիստ, այլև զարմանալի հանգիստ վիճակում էր: Դրանում մեզ համոզում է կարգի բերված սենյակի հանգամանքը, որտեղ կատարվել է սպանությունը և որտեղ Ելագինը դեռ երկար մնացել է դրանից հետո: Հետո՝ վկա Յարոշենկոյի ցուցմունքը, որը տեսել է, թե ինչպիսի հանգստությամբ է դուրս եկել Ելագինը Ստարոգրադսկայայի վրա գտնվող բնակարանից, ինչպես խնամքով, առանց շտապելու փակել է նա բնակարանը բանալիով: Եվ, վերջապես, Ելագինի պահվածքը ռոտմիստր Լիխարյովի տանը: Ի՞նչ է ասում, օրինակ, Ելագինը կոռնետ Սևսկուն, որը հորդորում էր նրան «ուշքի գալ», հիշել, արդյոք Սոսնովսկայան ինքը չի՞ իր վրա կրակել: Նա ասում է. «Ոչ, եղբայր, ես ամեն ինչ հիանալի հիշում եմ» և տեղնուտեղը նկարագրում է, թե ինչ ձևով է կրակել: Վկա Բուդբերգին. «Ելագինը նույնիսկ տհաճ զարմանք է պատճառել, նա իր խոստովանությունից հետո սառնասրտորեն թեյ էր խմում»: Իսկ վկա Ֆոխտն է՛լ ավելի էր զարմացել. «Պարոն շտաբս-ռոտմիստր,— հեզնանքով ասել էր նրան Ելագինը,— հուսով եմ, դուք այսօր ինձ կազատեք ուսումնական պարապմունքից:— Դա այնքան սարսափելի էր,— ասում էր Ֆոխտը,— որ կոռնետ Սևսկին չդիմացավ և հեկեկաց...»: Ճիշտ է, եղավ մի պահ, որ Ելագինն ինքն էլ հեկեկաց, դա երբ ռոտմիստրը վերադարձավ գնդի հրամանատարի մոտից, որի մոտ գնացել էր Ելագինի վերաբերյալ հրաման ստանալու, և երբ Ելագինը Լիխարյովի և Ֆոխտի դեմքերից հասկացավ, որ ինքն, ըստ էության, այլևս սպա չէ: Ահա այդ ժամանակ էլ նա հեկեկաց,— ավարտում է դատախազը,— միայն այդ ժամանակ:

Իհարկե, վերջին խոսքերը նորից շատ տարօրինակ են: Ում հայտնի չէ, թե որքան հաճախ վշտի, դժբախտության պատճառով առաջացած ընդարմացումից հանկարծ այդպես սթափվում են մի բոլորովին աննշան բանից, որևէ բանից, որ պատահաբար մարդու աչքն է ընկնում և հանկարծ հիշեցնում նրան ողջ իր անցած, երջանիկ կյանքը և ողջ հուսահատությունը, ողջ սարսափը իր ներկայիս վիճակի: Բայց չէ որ Ելագինին այդ ամենը հիշեցրել էր ամեննին էլ ոչ աննշան, պատահական մի բան: Չէ որ նա ասես ծնված լիներ սպա՝ նրա նախնիների տասը սերունդ զինվորականներ էին եղել: Եվ ահա նա սպա չէ, նա սպա չէ այն պատճառով, որ չկա այլևս աշխարհը, այն կինը, որին նա սիրել է իսկապես իր կյանքից ավելի և նա ինքը, ինքն է արել այդ հրեշավոր բանը:

Ի դեպ, այս բոլորը նույնպես սոսկ մանրամասներ են: Իսկ գլխավորն այն է, որ «կարճատև խելահեղություն» իրոք չի եղել: Այդ դեպքում, ի՞նչ է եղել: Դատախազն ընդունեց. «Այս մութ գործում ամեն ինչ նախ և առաջ պետք է հանգի Ելագինի և Սոսնովսկայայի խառնվածքների քննարկմանը և նրանց հարաբերությունների բացահայտմանը»: Եվ նա համոզված հայտարարեց.

— Մոտեցել էին իրար հետ ընդհանուր ոչինչ չունեցող երկու անձնավորություն...

Այդպե՞ս է արդյոք: Բանն էլ հենց այդ է. այդպե՞ս է արդյոք:

6

Ելագինի մասին ես նախ և առաջ կասեի, որ նա քսաներկու տարեկան է. ճակատագրական տարիք, սարսափելի շրջան, որ ձևավորում է մարդուն իր ապագա ողջ կյանքի համար: Մարդը սովորաբար այդ շրջանում ապրում է այն, ինչ բժշկության մեջ կոչվում է սեռի հասունացում, իսկ կյանքում՝ առաջին սեր, որին վերաբերվում են գրեթե միշտ բանաստեղծորեն և, ընդհանուր առմամբ, միանգամայն թեթևամտորեն: Հաճախ այդ «առաջին սերն» ուղեկցվում է դրամաներով, ողբերգություններով, սակայն ոչ ոք բացարձակապես չի մտածում, որ հենց այդ շրջանում մարդիկ ապրում են շատ ավելի խոր, շատ ավելի բարդ մի բան, քան հուզմունքը, տառապանքը, որ սովորաբար համարվում է սիրելի էակի պաշտում. ապրում են, իրենք էլ չհասկանալով, բուռն ծաղկում, տառապալից բացահայտում, սեռի առաջին բուռն դրսևորումը: Եվ ահա, եթե ես լինեի Ելագինի դատապաշտապանը, կխնդրեի դատավորներից ուշադրություն դարձնել նրա տարիքին հատկապես այդ տեսանկյունից և նաև այն բանին, որ մեր առջև նստած էր այդ իմաստով բնավ ոչ սովորական մի մարդ: «Երիտասարդ հուսար, խելահեղ կյանք վատնող,— ասում էր դատախազը՝ կրկնելով ընդհանուր կարծիքը և, որպես ապացույց իր ասածի իրավացիության, պատմեց մի վկայի՝ դերասան Լիսովսկու պատմածը այն մասին, ինչպես Ելագինը մի անգամ թատրոն եկավ ցերեկով, երբ դերասանները հավաքվում էին փորձի, և ինչպես Սոսնովսկայան, նրան տեսնելով, ետ քաշվեց, կանգնեց Լիսովսկու ետևում և արագ ասաց նրան. «Քեռի, ծածկիր ինձ այս մարդուց»: Եվ ես նրան ծածկեցի, պատմում էր Լիսովսկին, և, գինով լցված այս պատլիկ հուսարը, հանկարծ կանգ առավ ու մնաց ապշած. կանգնել է ոտները չռած, նայում է խելակորույս. ի՞նչ եղավ, ո՞ւր կորավ Սոսնովսկայան:

Այո, ճիշտ այդպես. խելակորույս մարդ: Սակայն ինչի՞ց խելակորույս: Մի՞թե «պարապ, սանձարձակ կյանքից»:

Ելագինը սերում է տոհմիկ և հարուստ ընտանիքից, մորից (որը, նկատի առեք, բավական հուզավառ խառնվածքի տեր էր) զրկվել էր շատ վաղ, հորից՝ մռայլ, խիստ այդ մարդուց, օտարացել էր, և ամենից առաջ այն սարսափից, որի մեջ նա մեծանում էր և մեծացավ:

Դատախազը դաժան վճռականությամբ նկարագրում է Ելագինի ոչ միայն բարոյական, այլև ֆիզիկական կերպարը: Եվ նա ասաց.

— Այսպիսին էր, պարոնայք, մեր հերոսը գեղեցիկ հուսարական զգեստով: Սակայն նայեցեք նրան հիմա: Հիմա այլևս նրան ոչինչ չի զարդարում: Մեր առջև է ցածրահասակ և կորամեջք մի երիտասարդ ճեփ-ճեփմակ բեղիկներով և չափազանց անարտահայտիչ, իմաստագուրկ դեմքի արտահայտությամբ, իր պստիկ սև սերթուկով Օթելլոյին բնավ չնմանվող, այսինքն, ըստ իս, խիստ շեշտված դեգեներատիվ առանձնահատկություններով, չափազանց վախվորած մի դեպքում,— ինչպես, օրինակ, հոր նկատմամբ,— և չափազանց հանդուգն, ոչ մի արգելքի հետ հաշվի չնստող այլ դեպքերում, այսինքն այն ժամանակ, երբ իրեն ազատ է զգում հոր հայացքից և ընդհանրապես հույս ունի անպատիժ մնալու...

Ոչինչ չես ասի, այդ կոպիտ բնութագրության մեջ ճշմարտություն շատ կա: Սակայն, լսելով այդ, ինձ համար նախ և առաջ անհասկանալի մնաց, թե ինչպես կարելի է այդքան թեթև մոտեցում ունենալ սարսափելի բարդ և ողբերգական այն ամենին, ինչ հատկանշական է խիստ արտահայտված ժառանգականությամբ մարդկանց, և, հետո, ես, այնուամենայնիվ, այդ ճշմարտության մեջ ճշմարտության միայն փոքր մի մասն էի տեսնում: Այո, Ելագինը մեծանում էր ահ ու դողով հոր նկատմամբ: Սակայն վախը վախկոտություն չէ, հատկապես ծնողների հանդեպ վախը, այն էլ մի մարդու, որն օժտված է բացառիկ զգացումով ողջ այն ժառանգության հանդեպ, որ նրան կապում է իր բոլոր հայրերի, պապերի և նախապապերի հետ: Այո, Ելագինի արտաքինը հուսարի դասական արտաքին չէ, սակայն դրանում ևս ես տեսնում եմ նրա արտասովոր խառնվածքի ապացույցներից մեկը. ավելի ուշադիր դիտեցեք, կասեի ես դատախազին, այդ շիկավուն, կորամեջք, բարակոտն մարդուն, և դուք գրեթե սարսափով կտեսնեք, թե որքան հեռու է անարտահայտիչ լինելուց նրա պեպենոտ դեմքը փոքրիկ ու կանաչավուն (ձեզ նայելուց խուսափող) աչքերով: Եվ հետո, ուշադրություն դարձրեք նրա դեգեներատիվ ուժին. սպանության օրը նա գնացել է զինավարժության,— վաղ առավոտից, անշուշտ,— և նախաճաշի ժամանակ խմել է վեց ըմպանակ օղի, մի շիշ շամպայն, երկու ըմպանակ կոնյակ և այդուհանդերձ գրեթե բացարձակապես սթափ վիճակում է եղել:

7

Ելագինի մասին ընդհանուր ցածր կարծիքին մեծապես հակասում էին նրա գնդի շատ ընկերների ցուցմունքները: Նրանք բոլորը Ելագինի մասին ամենալավ ձևով էին արտահայտվում: Ահա, օրինակ, թե ինչ կարծիքի էր նրա մասին հեծելավաշտի հրամանատարը:

—Գունդ մտնելով, Ելագինն իրեն հիանալի պահեց սպաների մեջ և միշտ չափազանց բարի էր, հոգատար, արդարացի նաև ցածրաստիճանների հանդեպ: Նրա բնավորությունը, իմ կարծիքով, միայն մի բանով էր տարբերվում՝ փոփոխականությամբ, որ արտահայտվում էր ոչ թե որևէ անախորժ բանով, այլ հաճախակի և արագ փոփոխություններով

ուրախությունից մելամաղձության, շատախոսությունից լռակյացության,
ինքնավստահությունից հուսալքության իր արժանիքների և իր ողջ ճակատագրի հանդեպ:

Այնուհետև՝ ռոտմիստը Լիխարյովի կարծիքը:

— Ելագինը միշտ եղել է բարի և լավ ընկեր, միայն տարօրինակություններով. մեկ լինում էր համեստ և ամոթխած գաղտնապահ, մեկ ընկնում մի տեսակ շվայտության, անգուսպ հանդգնության մեջ... Այն բանից հետո, երբ եկավ ինձ մոտ Սոսնովսկայայի սպանության խոստովանությամբ և Սևսկին ու Կոշիցը սլացան Ստարոգրադսկայա, նա մեկ խելակորույս լալիս էր, մեկ թունոտ և կատաղի ծիծաղում, իսկ երբ նրան բանտարկեցին և տանում էին կալանքի, անհեթեթ ժպիտով մեզնից խորհուրդ էր հարցնում, թե որ դերձակի մոտ իր համար քաղաքացիական հագուստ պատվիրի...

Այնուհետև՝ կոմս Կոշիցի կարծիքը.

— Ելագինն ընդհանուր առմամբ ուրախ և քնքուշ բնավորության տեր էր, ջղային, տպավորվող, նույնիսկ խանդավառության հակումով: Հատկապես նրա վրա ազդում էին թատրոնը և երաժշտությունը, հաճախ նույնիսկ արտասվելու աստիճանի. ասենք, նա ինքն էլ արտակարգ երաժշտական ընդունակություն ուներ, նվագում էր գրեթե բոլոր գործիքներով...

Մոտավորապես նույն բանն ասացին և մյուս բոլոր վկաները.

— Շատ հրապուրվող մարդ էր, բայց կարծես միշտ սպասում էր ինչ-որ իսկական, արտակարգ բանի...

— Ընկերական խնջույքների ժամանակ միշտ ուրախ էր և մի տեսակ հաճելի ձանձրացնող, շամպայն բոլորից շատ էր պահանջում և հյուրասիրում էր ում պատահի... Սոսնովսկայայի հետ կապի մեջ մտնելով, որի հանդեպ իր զգացմունքը միշտ ջանում էր բոլորից թաքցնել, շատ փոխվեց. հաճախ լինում էր մտախոհ, տխուր, ասում էր, որ քանի գնում իր մեջ հաստատվում է ինքնասպանության մտադրությունը...

Այսպիսին են Ելագինի մասին տեղեկությունները այն մարդկանցից, որ նրա հետ ամենից ավելի մոտ հարաբերությունների մեջ են եղել: Որտեղի՞ց է, ուրեմն, մտածում էի դատարանում նստած, դատախազն այդքան սև գույներ վերցրել նրա դիմանկարի համար: Թե՞ նա ուրիշ որևէ տեղեկություններ ունի: Ոչ, նա այդպիսի տեղեկություններ չունի: Եվ մնում է ենթադրել, որ նրան այդ սև գույներին են մղել իր ընդհանուր պատկերացումները «ոսկե երիտասարդության» մասին և այն, ինչ նա իմացել է դատարանի տրամադրության տակ գտնվող Ելագինի միակ նամակից՝ ուղղված Քիշնևում ապրող իր մի ընկերոջը: Այստեղ Ելագինը առավել բաց է խոսում իր կյանքի մասին.

— Հասել եմ ես, եղբայրս, մի տեսակ անտարբերության. ամեն, ամեն ինչ միևնույն է: Այսօր լավ է, ուրեմն, փառք աստծո, իսկ վաղը ինչ կլինի՝ թքած, առավոտվա խելքը իրիկվանից լավ է: Համբավ եմ ձեռք բերել փառավոր՝ առաջին հարբեցողն ու ապուշը գրեթե ամբողջ քաղաքում...

Այսպիսի ինքնագնահատումը ասես կապվում էր դատախազի պերճախոսության հետ, որն ասում էր, թե «հանուն վայելքի իր անասնական պայքարի պատճառով, Ելագինը ամեն ինչ իրեն նվիրաբերած կնոջը կանգնեցրել է հասարակության դատի առջև և զրկել նրան ոչ միայն կյանքից, այլև վերջին պատվից՝ քրիստոնեական հուղարկավորությունից...»։ Սակայն կապվո՞ւմ էր դա իսկապես։ Ոչ, դատախազն այդ նամակից վերցրել էր մի քանի տող միայն։ Իսկ ամբողջությամբ նամակն այսպիսին էր.

— Թանկագին Սերգեյ։ Նամակդ ստացա ու թեև ուշ եմ պատասխանում, բայց, դեհ, ինչ արած։ Հավանաբար, նամակս կարդալով, պիտի մտածես. «Այ քեզ խզմզոց, ոնց որ թանաքի մեջ ընկած ճանճ թղթի վրա սողեսող անի»։ Էհ, այդպես է, ձեռագիրն, ինչպես ասում են, հանդիսանում է մարդու բնավորության եթե ոչ հայելին, ապա որոշ չափով նրա արտահայտությունը։ Ես էլի նույն անբանն եմ, ինչպիսին որ էի, իսկ եթե կուգես, նույնիսկ ավելի վատ, քանի որ երկու տարվա ինքնուրույն կյանքը և էլի որոշ բաներ իրենց կնիքն են դրել։ Եղբայրս, կա մի բան, որ ինքը Սողոմոն իմաստունն էլ չի կարողանա արտահայտել։ Այնպես որ չգարմանս, եթե մի գեղեցիկ օր լսես, որ ինքս ինձ թրխկացրել եմ։ Եղբայրս, ես հասել եմ մի տեսակ անտարբերության, ամեն, ամեն ինչ միևնույն է։ Այսօր լավ է, ուրեմն, փառք աստծո, իսկ վաղը ինչ կլինի՝ թքած, առավոտվա խելքը իրիկվանից լավ է։ Համբավ եմ ձեռք բերել փառավոր՝ առաջին հարբեցողն ու ապուշը գրեթե ամբողջ քաղաքում...

Իսկ դրա հետ մեկտեղ, կհավատա՞ս։ Երբեմն հոգուս մեջ այնպիսի ուժ և տառապանք եմ զգում և ձգտում ամեն լավի, վսեմի, ընդհանրապես, սատանան գիտի, թե ինչի, որ սիրտս կտոր-կտոր է լինում։ Կասես, թե դա ջահելություն է, բայց ինչո՞ւ, այդ դեպքում, իմ հասակակիցները ոչ մի նման բան չեն զգում։ Դարձել եմ խիստ ջղային, երբեմն ձմռանը, գիշերով, բքին, սառնամանիքին, անկողնուց վեր թռչելով, ձին հեծած սլանում եմ փողոցներով, զարմանք պատճառելով նույնիսկ ոստիկաններին, որ սովոր են ոչ մի բանից չզարմանալ. և, նկատի առ, լրիվ սթափ վիճակում, ոչ թե հարբած։ Ուզում եմ որսալ մի անորսալի մեղեդի, որ թվում է լսել եմ ինչ-որ տեղ, իսկ այն չկա ու չկա։ Էհ, քեզ որ կխոստովանեմ. սիրահարվել եմ, և ամենևին, ամենևին ոչ այնպիսի մեկին, ինչպիսիներով լցված է ամբողջ քաղաքը... Ի դեպ, այս մասին բավական է։ Գրիր ինձ, խնդրում եմ, հասցես գիտես։ Հիշո՞ւմ ես, ինչպես էիր ասում. «Ռուսաստան, կոռնետ Ելագինին...»։

Զարմանալի է, ինչպես կարելի էր թեկուզ այս մի նամակը կարդալուց հետո ասել, որ «միացել էին իրար հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող անձնավորություններ»։

Սոսնովսկայան գտարյուն լեհուհի էր։ Ելագինից մեծ էր տարիքով. նա քսանութ տարեկան էր։ Հայրը, մանր աստիճանավոր, կյանքին վերջ էր տվել ինքնասպանությամբ, երբ աղջիկը դեռ երեք տարեկան էր։ Մայրը երկար ժամանակ մնացել էր այրի, հետո նորից ամուսնացել էր, նորից մանր աստիճանավորի հետ, և նորից շուտով այրիացել։ Ինչպես տեսնում եք, Սոսնովսկայայի ընտանիքը բավական միջակ կարգի ընտանիք էր, որտեղի՞ց էին ուրեմն հոգեկան այն տարօրինակ գծերը, որ հատուկ էին Սոսնովսկայային և որտեղից էր նրա մոլի սերը բեմի հանդեպ, որ, ինչպես գիտենք, բավական վաղ արտահայտվեց նրա

մեջ: Կարծում եմ, անշուշտ, ոչ ընտանեկան դաստիարակությունից և ոչ էլ այն մասնավոր պանսիոնից, որտեղ նա սովորում էր: Իսկ սովորում էր նա, ի դեպ ասած, շատ լավ ու ազատ ժամանակ շատ կարդում էր: Եվ, կարդալով, երբեմն գրքերից դուրս էր գրում իրեն դուր եկած մտքերը և ասույթները,— իհարկե, ինչպես միշտ լինում է նման դեպքերում, դրանք այս կամ այն կերպ կապելով իր հետ,— և ընդհանրապես որոշ գրառումներ էր կատարում, օրագրի նման մի բան էր պահում, եթե միայն կարելի է օրագիր համարել այն թղթի կտորտանքները, որոնց երբեմն ձեռք չէր տալիս ամիսներով և որոնց վրա խառնիխուռն գեղում էր իր երազանքներն ու հայացքները կյանքի նկատմամբ, կամ էլ պարզապես գրանցում լվացարարուհու, դերձակուհու հաշիվները և այդ կարգի մյուս բաները: Իսկ ի՞նչ էր հատկապես նա դուրս գրում:

— «Աշխարհ չգալը՝ առաջին երջանկությունն է, իսկ երկրորդը՝ որքան կարելի է շուտ վերադառնալ անգոյության»: Հիանալի միտք:

— Աշխարհը տաղտկալի է, անասելիորեն տաղտկալի, իսկ իմ հոգին ձգտում է արտասովոր մի բանի...

— «Մարդիկ հասկանում են միայն այն տառապանքները, որից մահանում են»: Մյուսսե:

— Ոչ, ես երբեք չեմ ամուսնանա: Բոլորն են այդպես ասում: Բայց ես երդվում եմ աստծով և մահով...

— Միայն սեր կամ մահ:— Սակայն ամբողջ աշխարհում որտեղից պիտի գտնվի այնպիսին, որին ես սիրեմ: Այդպիսին չկա և չի կարող լինել: Բայց ինչպե՞ս մեռնեմ, երբ խենթի նման սիրում եմ կյանքը:

— Ավելի սարսափելի, ավելի հրապուրիչ ու խորհրդավոր բան, քան սերը՝ չկա ոչ երկնքում, ոչ երկրի վրա...

— Մայրս, օրինակ, ասում է, որ ամուսնանամ փողի համար: Ես, ե՞ս, փողի համար: Որպիսի ոչ երկրային բառ է սերը, որքան դժոխք և հրապույր կա դրա մեջ, թեև ես երբեք չեմ սիրել:

— Ամբողջ աշխարհը նայում է ինձ միլիոնավոր գիշատիչ աչքերով, ինչպես երբ փոքրիկ ժամանակ լինում էի գազանանոցում...

— «Մարդ լինել. չարժե: Հրեշտակ՝ նույնպես: Հրեշտակներն էլ բողոքեցին և ապստամբեցին աստծու դեմ: Արժե լինել աստված կամ ոչնչություն»: Կրասինսկի:

— «Ով կարող է պարծենալ, որ թափանցել է նրա հոգին, երբ նրա բոլոր ջանքերն ուղղված են յուր հոգու խորքերը թաքցնելուն»: Մյուսսե:

Պանսիոնում իր պարապմունքներն ավարտելով, Մոսնովսկայան անմիջապես մորը հայտնեց, որ վճռել է իրեն նվիրել արվեստին: Մայրը, բարեպաշտ կաթոլիկ, նախ, իհարկե, լսել անգամ չուզեց, որ աղջիկը դերասանուհի դառնա: Սակայն աղջիկը այնպիսին չէր բնավ, որ ենթարկվեր որևէ մեկին, և արդեն դրանից առաջ էլ կարողացել էր մորը ներշնչել,

որ իր կյանքը, Մարիա Սոսնովսկայայի կյանքը, երբեք չի կարող սովորական և անփառունակ մի կյանք լինել:

Տասնութ տարեկան հասակում նա մեկնեց Լվով և արագ իրականացրեց իր երազանքը. բեմ ընկավ առանց մի բարդության և շուտով նկատվեց բեմում: Շատ չանցած նա և հասարակության մեջ, և թատերական աշխարհում այնքան լուրջ համբավ ձեռք բերեց, որ իր ծառայության երրորդ տարում հրավեր ստացավ մեր քաղաք գալու: Սակայն Լվովում էլ նա իր հուշատետրում մոտավորապես նույն բաներն էր գրում, ինչ և առաջ.

— «Նրա մասին բոլորը խոսում են, նրա համար լաց են լինում և ծիծաղում նրա վրա, սակայն ո՞վ է նրան ճանաչում»: Մյուսսե:

— Եթե չլինեիր մայրս, ես ինձ կսպանեի: Դա իմ մշտական ցանկությունն է...

Երբ քաղաքից դուրս եմ գալիս որևէ տեղ, տեսնում եմ երկինքը այնքան գեղեցիկ և անհատակ, չգիտեմ, թե ինչ է կատարվում ինձ հետ այդժամ: Ուզում եմ բղավել, երգել, արտասանել, լացել... սիրել և մեռնել...

— Ես ինձ համար գեղեցիկ մահ կընտրեմ: Կվարձեմ մի փոքրիկ սենյակ, կկարգադրեմ այն պաստառել սգագույն կտորով: Նվազը կլինի պատի ետևում, իսկ ես կպառկեմ համեստ սպիտակ զգեստով անհամար թվով ծաղիկներով շրջապատված, որոնց բուրմունքն էլ ինձ կսպանի: Օ՛, որքան սքանչելի կլինի այդ:

Եվ այնուհետև.

— Բոլորը, բոլորը պահանջում են իմ մարմինը, ոչ թե հոգին...

— Եթե հարուստ լինեի, կշրջեի ամբողջ աշխարհը և սեր կունենայի երկրագնդով մեկ...

— «Մարդը գիտե՞, թե ինքն ինչ է ուզում: Համոզվա՞ծ է այն բանում, ինչ մտածում է»: Կրասինսկի:

Եվ, վերջապես.

— Սրիկա՛:

Ո՞վ էր այդ սրիկան, որ արել էր, անշուշտ, այն, ինչ դժվար չէ կռահել: Հայտնի է, միայն, որ նա եղել էր և չէր կարող չլինել: «Դեռ Լվովում,— ասաց վկա Զաուզեն, Սոսնովսկայայի հետ Լվովում աշխատողներից մեկը,— նա բեմի համար ոչ թե հագնվում էր, այլ ավելի շուտ հանվում, իսկ իր մոտ իր բոլոր ծանոթներին և երկրպագուներին ընդունում էր թափանցիկ պենյուարով, մերկ ոտքերով: Նրա ոտքերի գեղեցկությունը բոլորին և հատկապես նորեկներին հիացական զարմանք էր պատճառում: Եվ նա ասում էր. «Մի զարմացեք, իմ սեփական ոտքերն են»— ու բացում էր ոտքերը ծնկներից վեր: Միաժամանակ նա անդադար ասում էր ինձ,— հաճախ արցունքն աչքերին,— որ չկա իր սիրուն արժանի մեկը և որ իր միակ հույսը մահն է»...

Եվ ահա հայտնվում է «սրիկան», որի հետ նա մեկնում է Կոստանդնուպոլիս, Վենետիկ, Փարիզ և որի մոտ նա լինում է Կրակովում, Բեռլինում: Դա գալիցիացի մի կալվածատեր էր, չափազանց հարուստ մարդ: Նրա մասին ասում էր վկա Վոլսկին, որ մանկուց ճանաչում էր Սոսնովսկայային:

— Սոսնովսկայային ես միշտ համարել եմ շատ ցածր բարոյական մակարդակի կին: Նա չէր կարողանում իրեն պահել այնպես, ինչպես վայել է դերասանուհուն և մեր երկրում ապրողին: Նա սիրում էր միայն փող, փող և տղամարդիկ: Անպատկառություն էր, երբ նա դեռ գրեթե աղջնակ իրեն վաճառեց այդ գալիցիացի ծեր վարազին:

Հենց այդ «վարազի» մասին է պատմել Սոսնովսկայան Ելագինին մահից առաջ իր զրույցի ժամանակ: Այդտեղ նա բառերի հեղեղ թափելով գանգատվում էր Ելագինին:

— Ես մեծանում էի մեն-մենակ, ոչ ոք ինձ չէր հետևում: Ես իմ ընտանիքում, ասենք և ամբողջ աշխարհում, օտար էի բոլորի համար... Մի կին, — անիծյալ լինի նրա ողջ սերունդը, — փչացնում էր ինձ, դուրսահավատ, մաքուր աղջկան... Իսկ Լվովում ես անկեղծորեն սիրեցի մի մարդու, ինչպես հորս, որը պարզվեց այնպիսի սրիկա էր, այնպիսի սրիկա, որ հիմա առանց սարսափի հիշել չեմ կարող: Եվ նա ինձ սովորեցրեց հաշիշի, գինու, նա ինձ տարավ Կոստանդնուպոլիս, որտեղ մի ամբողջ հարեմ ուներ, նա պառկում էր այդ հարեմում ու նայում իր մերկ ստրկուհիներին և ստիպում էր ինձ նույնպես հանվել, ստոր, ցածր մարդ...

9

Մեզ մոտ, մեր քաղաքում, Սոսնովսկայան շուտով ասելիք դարձավ բոլորի բերաններում:

— Դեռևս Լվովում, — ասում էր վկա Մեշկովը, — նա շատերին էր առաջարկում մեռնել իր հետ անցկացրած մի գիշերվա համար և շարունակ կրկնում, որ սիրելու ընդունակ սիրտ է որոնում: Նա շատ համառորեն էր որոնում այդ սիրող սիրտը: Իսկ ինքը շարունակ ասում էր. «Իմ գլխավոր նպատակն է՝ ապրել և օգտվել կյանքից: Համտեսը պետք է փորձի բոլոր գինիները, բայց ոչ մի գինով չարբենա: Այդպես էլ պետք է վարվի կինը տղամարդկանց հետ»: Եվ նա այդպես էլ վարվում էր, — ասում էր Մեշկովը: — Վստահ չեմ ամենևին, թե արդյոք բոլոր գինիներն է նա փորձել, սակայն գիտեմ, որ շրջապատել էր իրեն դրանց մեծ քանակությամբ: Ի դեպ, միգուցե այդ էլ նա անում էր գլխավորապես նրա համար, որ իր շուրջ աղմուկ ստեղծի, ծափահարողներ ձեռք բերի թատրոնի համար: «Փողը, — ասում էր նա, — դատարկ բան է: Ես ազահ եմ, երբեմն ժլատ ամենատեղին քաղքենի կնոջ նման, բայց փողի մասին կարծես չեմ մտածում: Գլխավորը՝ փառքն է, մնացած ամեն ինչ կլինի»: Եվ մահվան մասին էլ, իմ կարծիքով, նա մշտապես խոսում էր միայն այդ նպատակով՝ ստիպելու իր մասին խոսել...

Նույն բանը, ինչ որ Լվովում, շարունակվում էր և մեր քաղաքում: Եվ գրեթե նույնպիսի զրառումներ էին կատարվում:

— Տե՛ր իմ, ինչպիսի տաղտուկ է, ինչ տառապանք: Գոնե երկրաշարժ լիներ, արևի խավարում լիներ:

— Մի անգամ երեկոյան գերեզմանատանն էի. այնտեղ այնքան հրաշալի էր: Ինձ թվում էր... Բայց ոչ, ես չեմ կարողանա այդ զգացումը նկարագրել: Ուզում էի մնալ ամբողջ գիշեր, արտասանել գերեզմանների վրա և մեռնել ուժասպառությունից: Հաջորդ օրը ես այնքան լավ էի խաղում, ինչպես երբեք...

Եվ դարձյալ.

— Երեկ գերեզմանատանն էի երեկոյան ժամը տասին: Ի՛նչ ծանր տեսարան է: Լուսինը շողերով ողողել էր շիրմաքարերն ու խաչերը: Թվում էր, թե շրջապատված եմ հազարավոր մեռյալներով: Իսկ ես ինձ զգում էի այնքան երջանիկ, ուրախ: Ինձ շատ լավ էի զգում...

Իսկ ծանոթանալով Ելագինի հետ և մի անգամ նրանից իմանալով, որ գնդում մահացել է վախժիստը, նա պահանջում է, որ Ելագինը նրան տանի մատուռ, որտեղ դրված էր հանգուցյալը, և գրի է առնում, որ մատուռը և հանգուցյալը լուսնի լույսի ներքո նրա վրա «ցնցող-հիացական տպավորություն են թողել»:

Փառքի, մարդկանց ուշադրությանն արժանանալու փափագն այդ ժամանակ նրա մոտ ուղղակի մոլուցքի էր հասել: Այո, նա շատ գեղեցիկ էր: Նրա գեղեցկությունն, իհարկե, ինքնատիպ չէր, բայց, այնուամենայնիվ կար, նրա մեջ մի առանձնահատուկ բան, մի հազվագյուտ, ոչ սովորական հմայք, մի տեսակ միամտություն և անմեղություն վայրագ խորամանկության հետ խառնված, և, բացի այդ, մշտական խաղի և անկեղծության միախառնում. նայեցեք՝ նրա դիմանկարներին, ուշադրություն դարձրեք հայացքին, իրեն միայն հատուկ հայացք՝ միշտ փոքր-ինչ աչքի տակով, հետոն էլ միշտ շրթունքները շատ քիչ կիսաբաց, տխուր, ավելի շատ՝ հաճելի, կանչող, ինչ-որ բան խոստացող, ասես ինչ-որ բանի՝ թաքուն, արտասովոր մի բանի համաձայնող: Եվ նա կարողանում էր օգտվել իր գեղեցկությունից: Բեմից նա որսում էր իր երկրպագուներին ոչ միայն նրանով, որ բեմի վրա նա հատկապես էր կարողանում փթթել բոլոր իր հմայքներով, ձայնի հնչեղությամբ ու շարժումների աշխուժությամբ, ծիծաղով ու արցունքներով, այլև այն բանով, որ մեծ մասամբ հանդես էր գալիս այնպիսի դերերում, որտեղ կարող էր ցուցադրել իր մարմինը: Իսկ տանը հագնում էր գայթակղիչ արևելյան և հունական զգեստներ, որոնցով և ընդունում էր իր բազմաթիվ հյուրերին: Սենյակներից մեկը առանձնացրել էր, ինչպես ինքն էր ասում, հատկապես ինքնասպանության համար,— այնտեղ կային և ատրճանակներ, և դաշույններ, և թրեր՝ մանգաղների և պտուտակների ձևով, և սրվակներ ամեն տեսակի թույլներով,— իսկ զրույցների մշտական և ամենասիրած նյութը դարձրել էր մահը: Սակայն դա էլ դեռ բավական չէր. հաճախ, իրեն կյանքից զրկելու զանազան միջոցների մասին խոսելով, հանկարծ պատից հանում էր լցված ատրճանակը, հրահանը քաշում էր, ատրճանակի փողը դնում էր քունքին ու ասում. «Շուտ, համբուրեք ինձ, թե չէ իսկույն կկրակեմ», կամ էլ բերանն էր դնում ստրիխնիի հաբը և ասում, որ եթե հյուրը անմիջապես չչոքի ու չհամբուրի իր բոբիկ ոտքը, ինքը հաբը կուլ կտա: Եվ այդ ամենն անում էր ու ասում այնպես, որ հյուրը սարսափից գունատվում էր ու հեռանում նրա

մոտից կրկնակի գերված նրանով, քաղաքով մեկ տարածելով նրա մասին հենց այն հուզիչ լուրերը, ինչ այնքան ուզում էր նա ինքը...

— Ընդհանրապես, նա ինքն իր բնական վիճակում գրեթե երբեք չէր լինում,— ասում էր դատարանում վկա Զալեսկին, որ շատ երկար ժամանակ և շատ մոտից էր նրան ճանաչում։— Խաղալ, ջղայնացնել՝ դա նրա մշտական զբաղմունքն էր։ Մարդուն կատաղության հասցնել քնքշանվաղ խորհրդավոր հայացքներով, բազմանշանակ ժպիտներով կամ անպաշտպան երեխայի տխուր հառաչանքով՝ այդ բաներում նա մեծ վարպետ էր։ Նա իրեն այդպես էր պահում և Ելագինի հետ։ Մեկ տաքացնում էր նրան, մեկ գլխին սառը ջուր լցնում... Ուզո՞ւմ էր նա մահանալ։ Բայց նա գիշատչական սիրով սիրում էր կյանքը, մահից վախենում էր սոսկալի։ Ընդհանրապես, նրա խառնվածքի մեջ շատ կենսախնդրություն կար, զվարթություն։ Հիշում եմ, ինչպես մի անգամ Ելագինը նրան սպիտակ արջի մորթի էր նվեր ուղարկել։ Այդ ժամանակ նրա մոտ շատ հյուրեր կային։ Բայց նա բոլորին մոռացավ, այնքան որ հիացմունք էր պատճառել նրան այդ մորթին։ Նա մորթին փռեց հատակին և, ոչ մեկի վրա ուշադրություն չդարձնելով, սկսեց վրան գլուխկոնծի տալ, այնպիսի բաներ անել, որ ուզածդ հմուտ մարմնամարզիկը կնախանձեր... Զմայելի կին էր։

Ի դեպ, նույն այդ Զալեսկին պատմում էր, որ Սոսնովսկայան տառապում էր տրտմության, հուսահատության նոպաներով։ Բժիշկ Սետոշևսկին, որ ճանաչում էր նրան տաք տարի և բուժել էր նրան մինչև նրա Լվով մեկնելը,— այն ժամանակ նրա մոտ թոքախտ էր սկսվում,— նույնպես ցուցմունք տվեց, որ վերջին ժամանակներս նա տառապում էր սաստիկ ներվային խանգարումից, հիշողության կորստից և հալյուցինացիաներից, այնպես որ, ինքն անհանգստանում էր նրա մտավոր ընդունակությունների համար։ Այդ նույն խանգարումից նրան բուժում էր և Բժիշկ Շումախերը, որին նա շարունակ հավատացնելիս է եղել, որ իր մահով չի մահանալու (և որից նա մի անգամ վերցրել էր Շոպենհաուերի երկու հատորը, «շատ ուշադիր կարդացել և, որ ամենագարմանալին էր, հիանալի հասկացել էր, ինչպես պարզվեց հետո»)։ Իսկ Բժիշկ Նեդզելսկին այսպիսի ցուցմունք տվեց.

— Տարօրինակ կին էր։ Երբ հյուրեր էր ունենում, մասամբ լինում էր ուրախ, սեթևեթող, սակայն պատահում էր մեկ էլ առանց պատճառի կլոեր, աչքերը վերև կգցեր, գլուխը թեք կգցեր սեղանին... Այդպիսի դեպքերում պետք էր անմիջապես խնդրել նրան. դեհ, մեկ էլ, մեկ էլ, և նա անմիջապես վերջ էր տալիս։

Եվ ահա հենց այդ «տարօրինակ և հրաշալի կնոջն» է հանդիպում վերջապես կոռնետ Ալեքսանդր Միխայլովիչ Ելագինը։

Ինչպե՞ս էր տեղի ունեցել այդ հանդիպումը։ Ինչպե՞ս էր ծագել մտերմություն նրանց միջև և ինչպիսին էին նրանց զգացմունքները միմյանց նկատմամբ, նրանց հարաբերությունները։ Այդ մասին երկու անգամ պատմել է ինքը Ելագինը։ Առաջին

անգամ կարճ և կցկտուր, սպանությունից մի քանի ժամ հետո՝ քննիչին, երկրորդ անգամ՝ հարցաքննությունների ժամանակ, որ տեղի ունեցան առաջին հարցաքննությունից երեք շաբաթ հետո:

— Այո,— ասում էր նա,— ես մեղավոր եմ Սոսնովսկայային կյանքից զրկելու համար, **բայց նրա կամքով...**

— Ես նրա հետ ծանոթացա մեկ և կես տարի առաջ, թատրոնի տոմսարկղի մոտ, պորուչիկ Բուդբերգի միջոցով: Ես ջերմ սիրեցի նրան ու կարծում էի, որ նա բաժանում է իմ զգացմունքները: Սակայն ոչ միշտ էի դրանում համոզված: Երբեմն ինձ թվում էր, թե նա ինձ նույնիսկ սիրում է ավելի, քան ես նրան, իսկ երբեմն էլ՝ ընդհակառակն: Բացի այդ, նա մշտապես շրջապատված էր երկրպագուներով, սեթևեթում էր նրանց հետ, և ես դաժանորեն տառապում էի խանդից: Սակայն ի վերջո դա չէր մեր ողբերգական վիճակի պատճառը, այլ ինչ-որ մի ուրիշ բան, որ չեմ կարողանում արտահայտել... Ամեն դեպքում, երդվում եմ, որ սպանել եմ նրան ոչ խանդի պատճառով...

— Ասում եմ, ծանոթացել եմ նրա հետ անցյալ տարի փետրվարին, թատրոնում, տոմսարկղի մոտ: Ես նրան այցելություն կատարեցի, սակայն մինչև հոկտեմբեր ամիսը եղել եմ նրա մոտ ամիսը երկու անգամից ոչ ավելի, այն էլ միայն ցերեկով: Հոկտեմբերին խոստովանեցի նրան իմ սերը, և նա թույլ տվեց համբուրել իրեն: Դրանից հետո ես և նա իմ ընկեր Վոլոշինի հետ գնացել էինք ընթրելու քաղաքից դուրս գտնվող մի ռեստորանում, իսկ այնտեղից վերադառնում էինք երկուսով, ու թեև նա ուրախ տրամադրության մեջ էր, քնքշալի ու նույնիսկ մի թեթև հարբած, ես այնպիսի երկչոտություն ունեի նրա հանդեպ, որ վախենում էի նույնիսկ ձեռքը համբուրել... Հետո նա մի անգամ խնդրեց ինձնից Պուշկին և կարդալով «Եգիպտական գիշերները» ասաց. իսկ դուք կհամարձակվե՞ք ձեռք կյանքը տալ սիրած կնոջ հետ մի գիշեր անցկացնելու համար: Եվ երբ շտապեցի պատասխանել, որ այո, խորհրդավոր ժպտաց: Ես արդեն շատ էի սիրում նրան ու պարզ տեսնում էի և զգում, որ դա ինձ համար ճակատագրական սեր է: Քանի մենք մոտենում էինք, ես գնալով ավելի համարձակ էի դառնում, սկսել էի նրան ավելի ու ավելի հաճախ ասել իմ սիրո մասին, ասում էի, զգում եմ, որ կործանվում եմ... հենց թեկուզ միայն այն պատճառով, որ հայրս երբեք թույլ չի տա ամուսնանալ նրա հետ, որ առանց ամուսնության ինձ հետ ապրելը նրա համար անհնարին է որպես դերասանուհու, որին լեհ հասարակությունը երբեք չի ների ռուս սպայի հետ այդ բացարձակ անօրինական կապը: Եվ նա նույնպես բողոքում էր իր ճակատագրից, իր տարօրինակ բնավորությունից, բայց իմ խոստովանությունների, իմ անխոս հարցի պատասխանից, թե սիրո՞ւմ է նա ինձ արդյոք, խուսափում էր, թողնելով ինձ կարծես ինչ-որ մի հույս իր այդ գանգատներով և դրանց խիստ անձնական բնույթով...

— Հետո, այս տարվա հունվարից, սկսեցի նրա մոտ լինել ամեն օր: Նրան ծաղկեփնջեր էի ուղարկում թատրոն, տուն, նվերներ էի անում... Նվիրեցի երկու մանդոլինա, սպիտակ արջի մորթի, ադամանդյա մատանի և ապարանջան, վճռեցի նվիրել կրծքին կպցնելու զարդարանք գանգի ձևով: Նա շատ էր սիրում մահվան խորհրդանշաններ և շատ անգամ ասել էր ինձ, որ կուզենար ինձնից ստանալ հենց այդպիսի զարդարանք, ֆրանսերեն մակագրությամբ. «Quand même pour toujours!»

— Այս տարվա մարտի 26-ին նրանից ընթրիքի հրավեր ստացա: Ընթրիքից հետո նա առաջին անգամ տրվեց ինձ... այն սենյակում, որ նա անվանում էր ճապոնական: Այդ սենյակում էին տեղի ունենում և մեր հետագա տեսակցությունները. սպասուհուն նա ընթրիքից հետո ուղարկում էր քնելու: Հետո նա ինձ տվեց իր ննջարանի բանալին, որի դուռը դուրս էր գալիս ուղիղ սանդուղքի վրա... Ի հիշատակ մարտի 26-ի, մենք պատվիրեցինք ամուսնական մատանիներ, որոնց ներսի կողմում, նրա ցանկությամբ, փորված էին մեր անվան և ազգանվան առաջին տառերը և մեր մոտիկության ամսաթիվը...

Քաղաքից դուրս մեր ուղևորություններից մեկի ժամանակ գյուղում մոտեցանք եկեղեցու կողքին մի խաչի, և ես այդ խաչով երդվեցի հավերժորեն սիրել նրան, ասացի, որ նա իմ կինն է աստծու առջև և որ մինչև կյանքիս վերջ չեմ դավաճանի նրան: Նա կանգնել էր տխուր, մտախոհ, և լսում էր: Հետո ասաց պարզ և հաստատ... «Ես էլ եմ քեզ սիրում: Quand même pour toujours!»

— Մայիսի սկզբներին, երբ մի անգամ ընթրիքի էի նրա մոտ, նա հանեց ափիոնի փոշի և ասաց. «Ի՛նչ հեշտ է մահանալը: Բավական է մի քիչ լցնես, և վերջ»: Ու փոշին լցնելով շամպայնով ըմպանակի մեջ, մոտեցրեց բերանին: Ես նրա ձեռքից խլեցի բաժակը, գինին թափեցի բուխարու մեջ և ըմպանակը ջարդեցի կոշկախթանիս խփելով: Հաջորդ օրը նա ինձ ասաց. «Ողբերգության փոխարեն կատակերգություն ստացվեց երեկ»: Եվ ավելացրեց. «Ինչ անեմ, ինքս սիրտ չեմ անում, դու էլ չես կարողանում, չես համարձակվում... Իսկական խայտառակություն»,— Եվ դրանից հետո սկսեցինք ավելի ուշ-ուշ հանդիպել. նա ասաց, որ այլևս երեկոներն ինձ իր տանն ընդունել չի կարող: Ինչո՞ւ: Ես խելագարվում էի, տառապում սոսկալի: Սակայն, դրանից բացի, նա փոխվել էր իմ նկատմամբ, դարձել սառն ու հեզնոդ, հաճախ ինձ այնպես էր ընդունում, ասես հազիվ ծանոթ լինեիք, և շարունակ ծաղրում էր, որ կամք չունեմ... Ու մեկ էլ նորից ամեն ինչ փոխվեց: Սկսեց գալ ետևիցս, որ գնանք զբոսանքի, սկսեց սիրո նշաններ ցույց տալ: Թերևս այն պատճառով, որ ստիպում էի ինձ սառն ու զուսպ լինել նրա հետ շփվելիս... Վերջապես, ասաց, որ առանձին բնակարան վարձեմ մեր տեսակցությունների համար, բայց այնպիսի բնակարան, որ լինի խուլ փողոցում, որևէ անբարետես հին տան մեջ, լինի շատ մութ և պաստառվի այնպես, ինչպես ինքը կկարգադրի... Դուք գիտեք, թե ինչպես էր կահավորված այդ բնակարանը...

— Եվ ահա հունիսի 16-ին, ժամը չորսին գնացի նրա մոտ և ասացի, որ բնակարանը պատրաստ է, ու տվեցի նրան մի բանալի: Նա ժպտաց և, բանալին վերադարձնելով, պատասխանեց. «Այդ մասին հետո կխոսենք»: Այդ ժամանակ զանգը հնչեց, եկավ ոմն Շկյարևիչ: Ես շտապով բանալին գրպանս դրեցի ու սկսեցի խոսել դատարկ-մատարկ բաներից: Երբ Շկյարևիչի հետ գնում էինք նրա մոտից, նախասենյակում բարձր ասաց նրան. «Եկեք երկուշաբթի», իսկ ինձ շնջաց. «Եկ վաղը, չորսին», և շնջաց այնպես, որ զլուխս պտույտ եկավ:

— Հաջորդ օրը ուղիղ ժամը չորսին նրա մոտ էի: Որպիսին էր զարմանքս, երբ խոհարարուհին դուռը բացելով ասաց, որ Սոսնովսկայան չի կարող ինձ ընդունել և ինձ տվեց նրա նամակը: Նա գրում էր, որ իրեն անառողջ է զգում, որ մեկնում է մոր մոտ

ամառանոց, որ «հիմա արդեն ուշ է»: Գլուխս կորցրած, մտա առաջին իսկ պատահած հրուշականոցը, և նրան մի սարսափելի նամակ գրեցի, խնդրելով բացատրել, թե ինչ կնշանակի ուշ է խոսքը, և ուղարկեցի նամակատարի հետ: Սակայն նամակատարն իմ նամակը ետ բերեց. նա տանը չէր եղել: Այն ժամանակ վճռեցի, որ ուզում է վերջնականապես խզել ինձ հետ կապերը և, տուն վերադառնալով, նրան մի նոր նամակ գրեցի, խստորեն կշտամբելով ողջ այդ խաղի համար ինձ հետ և խնդրելով վերադարձնել ամուսնական մատանին, որը նրա համար հավանաբար սոսկ կատակ է եղել, իսկ ինձ համար ամենաթանկ բանն է աշխարհում և պետք է հետս գերեզման մտնի. դրանով ուզում էի ասել, որ մեր մեջ ամեն ինչ վերջացած է ու նրան հասկացնել, որ ինձ մնում է միայն մեռնել: Այդ նամակի հետ վերադարձրի նրան նրա լուսանկարը, նրա բոլոր նամակներն ու մանր-մունր իրերը, որ մնացել էին մոտս. ձեռնոցը, հերակալները, գլխարկը... Սպասյակը վերադարձավ և ասաց, նա տանը չէ և որ ինքը նամակն ու կապոցը թողել է դռնապանի մոտ...

— Երեկոյան գնացի կրկես և հանդիպեցի այնտեղ Շկյարնիչին, ինձ քիչ ծանոթ մի մարդու և, վախենալով մենակ մնալուց, նրա հետ շամպայն էի խմում: Հանկարծ Շկյարնիչն ասաց. «Լսեցեք, տեսնում եմ, որ տանջվում եք և գիտեմ դրա պատճառը: Հավատացե՛ք ինձ, որ նա դրան արժանի չէ: Մենք բոլորս անցել ենք այդ բովով, նա մեզ բոլորիս քթից բռնած ման է ածել»... Ուզում էի թուրս հանել և նրա գլուխը երկու կես անել, բայց այնպիսի վիճակում էի, որ ոչ միայն այդպիսի բան չարեցի ու չընդհատեցի այդ խոսակցությունը, այլ նույնիսկ հոգուս խորքում ուրախ էի դրա համար, ուրախ էի, որ կարող եմ գոնե որևէ մեկի կողմից կարեկցություն տեսնել: Ու չգիտեմ, թե հետո ինչ կատարվեց, ես, իհարկե, ոչ մի խոսքով չպատասխանեցի նրան, ոչ մի խոսք չասացի Մոսնովսկայայի մասին, բայց տարա նրան Ստարոգրադսկայա և ցույց տվեցի այն բնակարանը, որ այնքան սիրով ընտրել էի մեր տեսակցությունների համար: Ինձ համար այնքան ցավալի էր, այնքան ամոթալի, որ այդպես խաբված եմ այդ բնակարանով...

— Այդտեղից կառքը քշել տվեցի Նկյարովսկու ռեստորան. մանր անձրև էր մաղում, կառքը սլանում էր, և ես նույնիսկ այդ անձրևից, առջևում երևացող լույսերից ցավ ու սարսափ էի զգում: Գիշերվա ժամը մեկին Շկյարնիչի հետ վերադարձա ռեստորանից տուն և արդեն սկսել էի հանվել, երբ հանկարծ սպասյակս տվեց ինձ մի գրություն. նա սպասում էր ինձ փողոցում և խնդրում էր անմիջապես իջնել: Եկել էր սպասուհու հետ կառքով ու ասաց, որ այնքան է վախեցել ինձ համար, որ չի կարողացել մենակ գալ, հետը վերցրել է սպասուհուն: Հրամայեցի սպասյակիս սպասուհուն տուն ուղեկցել, իսկ ինքս նստեցի նրա կառքն ու գնացիք Ստարոգրադսկայա: Ճանապարհին կշտամբում էի նրան, ասում, որ խաղ է անում ինձ հետ: Նա լռում էր և, առջևը նայելով, երբեմն սրբում արցունքները: Ի դեպ, թվում էր, հանգիստ է: Եվ քանի որ նրա հոգեվիճակը սովորաբար միշտ հաղորդվում էր ինձ, ես էլ սկսեցի խաղաղվել: Երբ տեղ հասանք, նա իսկապես զվարթացավ. բնակարանը նրան շատ դուր եկավ: Բռնեցի նրա ձեռքը, ներողություն էի խնդրում բոլոր իմ հանդիմանությունների համար. խնդրում էի վերադարձնել ինձ իր լուսանկարը, այն, որ ջղայնացած նրան ետ էի ուղարկել: Մեր մեջ հաճախ էին գծություններ լինում, և միշտ ես ի վերջո ինձ մեղավոր էի զգում, միշտ ներողություն էի խնդրում: Գիշերվա ժամը երեքին

նրան տարա տուն: Ճանապարհին մեր խոսակցությունը նորից սուր բնույթ ստացավ: Նա նստել նայում էր առջևը, ես նրա դեմքը չէի տեսնում, զգում էի միայն նրա օծանելիքի բուրմունքն ու սառնահնչուն, չար ձայնը. «Դու տղամարդ չես,— ասում էր նա,— դու բոլորովին կամք չունես, ես կարող եմ քեզ կատաղեցնել և հանգստացնել, երբ ուզենամ: Տղամարդ որ լինեի, ես այդ տեսակ կնոջը կտոր-կտոր կանեի»: Այն ժամանակ ես բղավեցի. «Ուրեմն ետ վերցրեք ձեր մատանին», ես ուժով հագցրի նրա մատին: Նա դարձավ ինձ և շփոթված ժպտալով ասաց. «Վաղն արի»: Պատասխանեցի, որ ոչ մի դեպքում չեմ գա: Նա շփոթված, երկչոտ սկսեց խնդրել ինձ, ասում էր. «Ոչ, կգաս, կգաս... Ստարոգրադսկայա...»: Եվ հետո վճռաբար ավելացրեց. «Ոչ, աղաչում եմ, արի, շուտով մեկնելու եմ արտասահման, ուզում եմ տեսնել քեզ վերջին անգամ, գլխավորը, քեզ պետք է շատ կարևոր բան ասեմ»: Ու նորից լաց եղավ, ավելացրեց. «Զարմանում եմ ուղղակի, ասում ես, որ ինձ սիրում ես, որ առանց ինձ ապրել չես կարող և քեզ կխփես, ու չես ուզում տեսնել ինձ վերջին անգամ...»: Այն ժամանակ ասացի նրան, ջանալով լինել զուսպ, որ եթե այդպես է, վաղը նրան կհայտնեմ, թե որ ժամին կարող եմ ազատ լինել: Երբ բաժանվեցինք նրա տան մուտքի մոտ, անձրևի տակ, սիրտս կտրատվում էր նրա հանդեպ խղճահարությունից ու սիրուց: Տուն վերադառնալով, զարմանքով և զզվանքով տեսա տանս քնած Շկյարևիչին..

— Երկուշաբթի, հունիսի 18-ի առավոտյան նրան երկտող ուղարկեցի, որ ազատ կլինեմ ցերեկը ժամը տասներկուսից: Նա պատասխանեց. «Ժամը վեցին Ստարոգրադսկայայում...»:

11

Անտոնինա Կովանկոն, Սոսնովսկայայի սպասուհին, և նրա խոհարարուհին՝ Վանդա Լիննիչը ցուցմունք տվեցին, որ շաբաթ օրը, 16-ին, Սոսնովսկայան վառելով սպիրտայրոցը՝ ճակատի մազափունջը զանգրացնելու համար, ցրվածությամբ լուցկին զգում է իր թեթև կտորից պենյուարի փեշին, պենյուարը բռնկվում է, և Սոսնովսկայան սարսափած բղավում է, վրայից գցելով, քաշելով պենյուարը, և այնպես է վախենում, որ անկողին է մտնում, ուղարկում բժիշկ կանչելու, ու հետո շարունակ կրկնում է.

— Այ, կտեսնեք, սա մեծ դժբախտության նշան է...

Խեղճ, դժբախտ կին: Պենյուարի և նրա մանկական սարսափի այդ պատմությունը անասելի հուզում և գթաշարժում է ինձ: Այդ չնչին բանը մի տեսակ կապում և լուսաբանում է ինձ համար կցկտուր և հակասական այն ամենը, որ միշտ լսել ենք նրա մասին և այն, ինչ լսեցինք հասարակության մեջ և դատարանում՝ նրա մահից հետո և, ամենակարևորը, զարմանալիորեն իմ մեջ առաջացնում է կենդանի զգացողությունն այն իսկական Սոսնովսկայայի, որին գրեթե ոչ ոք չի հասկացել և չի զգացել իսկապես,— ինչպես և Ելագինին,— չնայած այն մեծ հետաքրքրությանը, որ միշտ արտահայտել են նրա հանդեպ, նրան հասկանալու, նրա էությունն ըմբռնելու ցանկությանը, չնայած նրա մասին բոլոր այն խոսքուզուրույցներին, որ անվերջանալի էին այս վերջին տարում:

Ընդհանրապես. նորից եմ ասում. զարմանալի է մարդկային դատողությունների խղճուկությունը: Նորից տեղի ունեցավ այն, ինչ լինում է, երբ մարդիկ պետք է զուլխ հանեն որևէ թեկուզ փոքր իսկ կարևոր իրադարձությունից. պարզվեց, որ մարդիկ նայում են և չեն տեսնում, ականջ են դնում և չեն լսում: Պե՞տք էր արդյոք հակառակ ամենայն ակներևության, ասես դիտավորյալ, այդ աստիճան խեղաթյուրել և՛ Ելագինին, և՛ Սոսնովսկայային, և՛ այն ամենը, ինչ տեղի էր ունեցել նրանց միջև: Բոլորն ասես պայմանավորվել էին ոչինչ չասել, գոեհկություններից բացի: Իբր, ինչ կա այստեղ չհասկանալու. նա հուսար է, մոլի ու հարբած կյանք վատնողի մեկը, կինը՝ դերասանուհի, իր վայրիվերո ու անբարոյական կյանքի մեջ խճճված...

— Մեկուսի սենյակներ, գինի, թեթևաբարո կանայք, դեբոշներ,— ասում էին Ելագինի մասին:— Սրի շաշունը խլացնում էր նրա մեջ բոլոր զգացմունքները...

Բարձր զգացմունքներ, գինի: Ի՞նչ բան է գինին Ելագինի խառնվածքի տեր մարդու համար: «Երբեմն հոգուս մեջ այնպիսի տառապանք եմ զգում և ձգտում ամեն լավի, վսեմի, ընդհանրապես, սատանան գիտի թե ինչի, որ սիրտս կտոր-կտոր է լինում... ուզում եմ որսալ մի անորսալի մեղեդի, որ թվում է լսել եմ ինչ-որ տեղ, իսկ այն չկա ու չկա...»: Եվ ահա գինով վիճակում ավելի հեշտ ու ազատ ես շնչում, գինով վիճակում անորսալի մեղեդին ավելի հստակ, ավելի մոտ է հնչում: Թեկուզ որ՝ և՛ գինովությունը, և՛ երաժշտությունը, և՛ սերն ի վերջո խաբուսիկ են, սոսկ սաստկացնում են իր սրությամբ և չափազանցությամբ աննկարագրելի այդ աշխարհզգացողությունը, կյանքի զգացողությունը:

— Նա Ելագինին չէր սիրում,— ասում էին Սոսնովսկայայի մասին:— Նա միայն վախենում էր Ելագինից, չէ որ սա մշտապես սպառնում էր, թե ինքնասպանություն կգործի, այսինքն իր մահով ոչ միայն մեղք կանի նրա հոգուն, այլև նրան մեծ խայտառակության հերոսուհի կդարձնի: Վկայություններ կան, որ նա նրա նկատմամբ «նույնիսկ որոշ զգվանք էր զգում»: Բայց, համենայն դեպս, պատկանո՞ւմ էր նրան: Իսկ մի՞ թե դա որևէ բան է փոխում: Ինչ է, նա քի՞չ մարդու է պատկանել: Սակայն Ելագինն ուզեց դրամայի վերածել մեկն այն բազմաթիվ սիրային կատակերգություններից, որ նա սիրում էր խաղալ...

Ու՛ նաև.

— Նա սարսափեց այն զարհուրելի, չափն անց խանդից, որ Ելագինն սկսել էր ավելի ու ավելի արտահայտել: Մի անգամ Ելագինի այնտեղ եղած ժամանակ Սոսնովսկայային հյուր էր եկել դերասան Ստրակունը: Նա նստել էր սկզբում հանգիստ, միայն գնալով գունատվում էր խանդից: Մեկ էլ վեր կացավ ու արագ գնաց հարևան սենյակ: Սոսնովսկայան նետվեց ետևից, և տեսնելով ձեռքին ատրճանակ, ծնկի եկավ նրա առաջ, աղաչելով նրան խնայել իրենց երկուսին էլ: Եվ այդպիսի տեսարաններ, հավանաբար, քիչ չէին լինում նրանց միջև: Սրանից հետո մի՞ թե հասկանալի չէ, որ Սոսնովսկայան վերջապես վճռել էր ազատվել նրանից, մեկնել արտասահմանյան ուղևորության, որին նա արդեն լիովին պատրաստ էր իր մահվան նախօրեին: Ելագինը բերում է նրան Ստարոգրադսկայայի վրա գտնվող բնակարանի բանալին, այն բնակարանի, որ Սոսնովսկայան, հավանաբար, հնարել էր, որպեսզի պատրվակ ունենա նրան իր տանը

չընդունելու մինչև մեկնելը: Սոսնովսկայան այդ բանալին չի վերցնում: Ելագինն ամեն կերպ աշխատում է նրան տալ բանալին: Սոսնովսկայան ասում է. հիմա արդեն ուշ է, այսինքն հիմա այլևս իմաստ չունի վերցնել, քանի որ մեկնում եմ: Բայց Ելագինը նրան այնպիսի մի նամակ է հղում, որ ստանալով այն, նա գիշերով սլանում է Ելագինի մոտ, սարսափից գլխակորույս, թե կարող է նրան արդեն մեռած գտնել...

Ընդունենք, թե դա այդպես է (թեև բոլոր այդ դատողությունները բացարձակապես հակասում են Ելագինի խոստովանությանը): Սակայն ինչու է, այնուամենայնիվ, Ելագինն այդպես «սարսափելի», չափն անց խանդում և ինչու է ուզում կատակերգությունը դրամայի վերածել: Դա նրա ինչի՞ն էր պետք: Ինչո՞ւ նա նրան տեղնուտեղը չխփեց իր խանդի նուպաներից մեկի ժամանակ: Ինչո՞ւ «մարդասպանի և նրա գոհի միջև պայքար չի եղել»: Եվ հետո. «Նա նրա նկատմամբ երբեմն նույնիսկ, կարելի է ասել, զգվանք էր զգում... Նա կողմնակի մարդկանց ներկայությամբ երբեմն ծաղրում էր նրան, վիրավորական մականուններ տալիս, անվանում նրան, օրինակ, ծուռոտանի շան լակոտ...»: Բայց, աստված իմ, չէ որ հենց դա է Սոսնովսկայայի ողջ էությունը: Չէ որ նրա դեռ լվովյան գրառումների մեջ կա հիշատակություն ինչ-որ մեկի նկատմամբ զգվանքի մասին. «Այդպես նա դեռ սիրում է ինձ: Իսկ ե՞ս: Ի՞նչ եմ զգում ես նրա նկատմամբ: Եվ սեր, և զգվանք»: Նա վիրավորո՞ւմ էր Ելագինին: Այո, մի անգամ նրա հետ գծովելով, որ նրանց միջև բավական հաճախ էր պատահում,— նա կանչում է սպասուհուն և իր նշանի մատանին հատակին նետելով բղավում. «Այս զարշանքը վերցրու քեզ»: Բայց ի՞նչ էր արել նա դրանից առաջ: Դրանից առաջ նա ներս էր ընկել խոհանոց և ասել.

— Հիմա ես քեզ կկանչեմ, այս մատանին կշպրտեմ հատակին և կասեմ, որ վերցնես քեզ: Բայց հիշիր՝ դա միայն խաղ է լինելու, դու պետք է հենց այսօր վերադարձնես այն ինձ, որովհետև այդ մատանիով ես նշանվել եմ նրա հետ, այդ ապուշի հետ, և դա ինձ համար թանկ է աշխարհում ամեն բանից ավելի...

Զուր չէր, որ նրան անվանում էին «թեթև վարքի տեր» կին, և զուր չէր, որ կաթոլիկական եկեղեցին մերժեց նրան քրիստոնեական հուղարկավորություն՝ «որպես վատ և անբարոյական անձնավորության»:

Նա ամբողջովին այն խառնվածքի կանանցից էր, որոնցից դուրս են գալիս և՛ պրոֆեսիոնալ հասարակաց տների կանայք, և՛ սիրո ազատ սպասավորներ: Սակայն ի՞նչ խառնվածքներ են դրանք: Այդ խառնվածքներին հատուկ է խիստ արտահայտված և չհագեցած, չբավարարված սեռը, որը չի էլ կարող հագնալ: Դա ինչի՞ն էր տեսանք է: Բայց մի՞թե ես կարող եմ իմանալ, թե ինչի: Եվ նկատի առեք, թե ինչ է տեղի ունենում մշտապես: Այն շատ բարդ և խորապես հետաքրքիր տիպի տղամարդիկ, որոնք հանդիսանում են (այս կամ այն չափով) ատավիստական տիպ, իրենց էությամբ սուր զգայական են ոչ միայն կանանց հանդեպ, այլև ընդհանրապես իրենց ողջ աշխարհագրության մեջ, հոգու և մարմնի ամբողջ ուժով ձգտում են միշտ հատկապես այդ տիպի կանանց և դառնում անթիվ-անհամար սիրային դրամաների և ողբերգությունների հերոսներ: Ինչո՞ւ: Իրենց ցածր ճաշակի, իրենց փչացածության, թե պարզապես այդպիսի կանանց մատչելիության պատճառով: Իհարկե ոչ, հազար անգամ՝ ոչ: Ոչ թեկուզ հենց այն պատճառով, որ այդ

տղամարդիկ շատ լավ և՛ զգում են, և՛ տեսնում, թե միշտ որքան տառապալից է, երբեմն հիբավի սարսափելի և կործանարար այդպիսի կանանց հետ կապը, մտերմությունը: Նրանք այդ զգում են, տեսնում, գիտեն, և, այնուամենայնիվ, ամենից ավելի ձգտում են նրանց, հենց այդպիսի կանանց, անգուպելի ձգտում են դեպի իրենց տառապանքը ու նույնիսկ կործանումը: Ինչո՞ւ:

— Իհարկե, նա պարզապես կատակերգություն էր խաղում, երբ գրում էր իր մահառաջի երկտողերը, ինքն իրեն ներշնչելով, թե իբր իսկապես էլ հասել է իր վերջին ժամը: Եվ բնավ հակառակը չեն համոզում նրա ոչ օրագրերը,— ի դեպ ասած, բավական տափակ և պարզամիտ,— և ոչ էլ գերեզմանոց գնալը...

Նրա օրագրերի պարզամտությունն ու գերեզմանոցում զբոսանքների թատերայնությունը ոչ ոք չի ժխտում, ճիշտ ինչպես և այն, որ նա սիրում էր ակնարկել իր նմանությունը Մարիա Բաշկիրցևայի հետ, Մարիա Վեչերայի հետ: Բայց, այնուամենայնիվ, ինչու էր նա ընտրել օրագրի հենց այդ ձևը, և ոչ մի ուրիշ և ուզում էր նման լինել հատկապես այդպիսի կանանց: Նա ուներ ամեն ինչ. գեղեցկություն, ջախելություն, փառք, փող, հարյուրավոր երկրպագուներ և այդ ամենից օգտվում էր մոլեգնաբար և ինքնամոռաց: Եվ սակայն կյանքը նրա համար տառապանք էր, մշտական փափագ հեռանալու ձանձրալի երկրային կյանքից, որտեղ ամեն ինչ միշտ այնպես չէր, այնպես չէր: Բայց ինչո՞ւ էր նա խաղում հենց այդ, և ոչ մի ուրիշ բան: Այն պատճառով, որ այդ ամենը շատ սովորական է իրենց, ինչպես իրենք են ասում, արվեստին նվիրված կանանց համար: Սակայն ինչո՞ւ է դա այդքան սովորական: Ինչո՞ւ:

12

Կիրակի օրը առավոտյան սեղանի զանգակը նրա ննջասենյակից զնգզնգաց ժամը ուրիշն. նա արթնացել էր և սպասուհուն կանչեց սովորականից շատ վաղ: Սպասուհին սկուտեղով բերեց մի գավաթ շոկոլադ և բացեց վարագույրները: Նա նստած էր անկողնու վրա և, ըստ իր սովորության, աչքի տակով, շրթունքները կիսաբաց, մտախոհ ու ցրված տեսքով հետևում էր սպասուհուն: Հետո ասաց.

— Գիտես, Տոնյա, երեկ ես բժշկի գնալուց հետո անմիջապես քնեցի: Օ՜յ, սուրբ աստվածածին, ինչպես էի վախեցել: Բայց հենց բժիշկը եկավ, արդեն ինձ լավ էի զգում ու հանգիստ: Գիշերն արթնացա, ծնկի եկա անկողնուս վրա և մի ամբողջ ժամ աղոթում էի... Մի մտածիր, թե ինչ էի լինելու, որ ամբողջովին այրվեի: Աչքերս դուրս կգային, շրթունքներս կուռչեին: Սարսափելի կլիներ վրաս նայել... Ամբողջ դեմքս կծածկեին բամբակով...

Երկար ժամանակ շոկոլադին ձեռք չէր տալիս և նստել էր ու նստել. ինքն իր մտքերի հետ: Հետո շոկոլադը խմեց և լոգանք ընդունելով հենց լոգանքի խալաթով, մազերն արձակ, իր փոքրիկ գրասեղանի մոտ նստած մի քանի նամակներ գրեց սգաշրջանակի մեջ առնված թղթերի վրա. նա վաղուց արդեն իր համար այդպիսի թուղթ էր պատվիրել: Հազնվելով և

նախաճաշելով, նա մեկնեց. եղել էր մոր մոտ ամառանոցում, իսկ վերադարձավ գիշերվա ժամը մեկին միայն, դերասան Ստրակունի հետ, որը «միշտ յուրային էր նրա մոտ»:

— Եկան երկուսն էլ լավ տրամադրության մեջ,— պատմում էր սպասուհին:—

Նախասենյակում նրանց դիմավորելով, անմիջապես մի կողմ կանչեցի տիրուհու և տվեցի նամակն ու իրերը, որ նրա բացակայությամբ ուղարկել էր Ելագինը: Նա իրերի մասին շուկով ասաց. «Շուտ պահիր, որ Ստրակունը չտեսնի», հետո շտապով բացեց նամակն ու անմիջապես գույնը գցեց, շփոթվեց, բղավեց, արդեն ուշադրություն չդարձնելով, որ Ստրակունը հյուրասենյակում էր. «Ի սեր աստծու, շտապ վազ տուր կառք բեր»: Ես վագեցի կառքի ետևից ու վերադառնալով, տեսա նա արդեն մուտքի մոտ է: Մենք սլանում էինք ամբողջ թափով, և ճանապարհին նա շարունակ խաչակնքում էր ու կրկնում. «Օ, սուրբ աստվածածին, միայն թե դեռ կենդանի լինի»:

Երկուշաբթի նա առավոտից մեկնեց գետափ, լողալու: Այդ օրը նրա մոտ ճաշում էին Ստրակունը և անգլուհին (որն, ընդհանրապես, գրեթե ամեն օր էր գալիս անգլերենի դաս տալու և գրեթե երբեք դաս չէր տալիս): Ճաշից հետո անգլուհին գնաց, իսկ Ստրակունը դեռ մեկ ու կես ժամի չափ մնաց. ծխում էր բազմոցին պառկած, գլուխը դրած տիրուհու ծնկներին, որի հագին միայն թեթև տնայնագգեստ էր և մերկ ոտքերին ճապոնական կիսակոշիկներ: Վերջապես Ստրակունը գնաց, և տիրուհին հրաժեշտ տալով նրան խնդրեց գալ «այսօր երեկոյան ժամը տասին»:

— Շատ շուտ-շուտ չի՞ լինի,— ասաց Ստրակունը, ծիծաղելով և որոնելով ձեռնափայտը նախասենյակում:

— Օհ, ոչ, խնդրում եմ,— ասաց տիրուհին:— Իսկ եթե ես տանը չլինեմ, դու, Լյուսյա, չբարկանաս...

Հետո երկար ինչ-որ նամակներ ու թղթեր է այրել բուխարու մեջ: Նա երգում էր, կատակում սպասուհու հետ.

— Հիմա ամեն ինչ կայրեմ, քանի որ ինքս չայրվեցի: Բայց լավ կլիներ, որ այրվեի: Միայն թե ամբողջապես, մինչև վերջ...

Հետո ասում է.

— Վանդային ասա, որ ընթրիքը լինի երեկոյան տասին: Իսկ հիմա ես մեկնում եմ...

Նա մեկնում է ժամը վեցին, հետը տանելով «ինչ-որ բան թղթի մեջ, փաթաթած՝ նման ատրճանակի»:

Նա գնում է Ստարոգրադսկայա, բայց ճանապարհին թեքվում մտնում է կարուհի Լեշչինսկայայի մոտ. սա կարգի է բերում, կարճացնում նրա պենյուարը, որ բռնկվել էր վրան շաբաթ օրը և, Լեշչինսկայայի խոսքերով ասած՝ «հաճելի և ուրախ տրամադրության մեջ էր»: Նայելով պենյուարն ու փաթաթելով այն թղթի մեջ, տնից հետը վերցրած կապոցի հետ, նա դեռ երկար նստում է արհեստանոցում, կարուհի աղջիկների հետ, և շարունակ ասում. «Օհ, մայր աստվածածին, ինչպես եմ ուշացել, գնալուս ժամանակն է,

հրեշտակներս»,— ու շարունակում նստած մնալ: Վերջապես վճռաբար տեղից վեր է կենում և հառաչելով, սակայն զվարթ ասում.

— Մնաք բարով, պանի Լեշչինսկայա: Մնաք բարով, քույրիկներ, հրեշտակիկներ, շնորհակալություն, որ հետներդ մի քիչ խոսեցի: Ինձ համար այնքան հաճելի է նստել ձեր այս սիրունիկ կանացի շրջանում, թե չէ միշտ միայն տղամարդկանց ու տղամարդկանց հետ եմ:

Եվ մի անգամ էլ ժպտալով գլխով է անում շեմքից ու դուրս գալիս...

Ինչո՞ւ է նա հետը ատրճանակ վերցրել: Այդ ատրճանակը Ելագինին էր, բայց նա պահում էր իր մոտ, վախենալով, թե Ելագինն ինքնասպանություն կգործի: «Իսկ հիմա մտադիր էր վերադարձնել տիրոջը, քանի որ մի քանի օրից երկար ժամանակով մեկնում էր արստասահման»,— ասաց դատախազն ու ավելացրեց.

— Այդպես նա գնաց իր համար ճակատագրական, բայց ոչ կանխահայտորեն ճակատագրական տեսակցությանը: Ժամը յոթին նա Ստարոգրադսկայայի վրա գտնվող N14 տանն էր, N 1 բնակարանում, և ահա այդ բնակարանի դուռը փակվում է ու նորից բացվում միայն հունիսի 19-ի առավոտյան: Ի՞նչ է կատարվում այնտեղ գիշերը: Այդ մասին մեզ ոչ ոք չի կարող պատմել, Ելագինից բացի: Լսենք, ուրեմն, նրան ևս մի անգամ:

13

Եվ մի անգամ նորից քար լռության մեջ, բոլորս, դատարանի ողջ բազմամարդ դահլիճը լսեցինք մեղադրական ակտի այն էջերը, որ դատախազը հարկ համարեց վերականգել մեր հիշողության մեջ և որոնցով ավարտվում էր Ելագինի պատմածը:

— Երկուշաբթի օրը, հունիսի 18-ին ես նրան երկտող ուղարկեցի, որ ազատ կլինեմ ցերեկը ժամը տասներկուսից: Նա պատասխանեց. «Ժամը վեցին Ստարոգրադսկայայում»:

— Ժամը վեցից քառորդ պակաս ես արդեն այնտեղ էի և հետո բերել էի ուտելիք, երկու շիշ շամպայն, երկու շիշ պորտեր, երկու բաժակ և մի սրվակ օդեկոլոն: Սակայն սպասեցի շատ երկար. նա եկավ ժամը յոթին միայն...

— Ներս մտնելով, նա ցրված համբուրեց ինձ, մտավ մյուս սենյակ և հետը բերած փաթեթը գցեց բազմոցին:— «Դուրս եկ,— ասաց ինձ ֆրանսերեն,— ուզում եմ հանվել,— ես դուրս եկա և երկար նստած էի մենակ: Ես լրիվ սթափ վիճակում էի և շատ ընկճված, աղոտ կերպով զգում էի, որ այս ամենն, իհարկե, վերջանում է... Ի դեպ, պայմաններն էլ արտառոց էին. նստած էի լամպի լույսով, ինչպես գիշերը, մինչդեռ գիտեի, զգում էի, որ դրսում, այս խուլ ու մութ սենյակներից դուրս դեռևս ցերեկվա լույս է, հիանալի ամառային երեկո... Նա երկար չէր կանչում ինձ, չգիտեմ, թե ինչ էր անում: Դռան ետև լռություն էր: Վերջապես ձայն տվեց... «Արի, հիմա կարելի է...»:

— Նա պառկած էր բազմոցին, միայն պենյուարով, ոտները մերկ՝ առանց գուլպա և կոշիկ, ու լռում էր՝ աչքի տակով նայելով առաստաղին, լամպին: Փաթեթը, որ հետը բերել էր, բացված էր, և ես տեսա իմ ատրճանակը: Հարցրեցի նրան. «Իսկ սա՞ ինչու ես բերել»: Նա

պատասխանեց ոչ անմիջապէս. «Հենց այնպէս... Չէ որ ես մեկնում եմ... Ավելի լավ է դու սա պահի այստեղ, ոչ թե տանը...»: Գլխովս սարսափելի մի միտք անցավ. «Ոչ, սա հենց այնպէս չէ», բայց ոչինչ չասացի...

— Եվ դրանից հետո մեր մեջ սկսված խոսակցությունը բավական երկար ժամանակ բռնազբոսիկ էր, սառն: Հոգուս խորքում սարսափելի հուզվում էի,— լարված ջանում էի մի բան հասկանալ, սպասում, թե ահա ուր ուր է կկարողանամ կենտրոնանալ, հավաքել ինձ ու ասել նրան վերջապէս կարևոր և վճռական մի բան,— չէ որ հասկանում էի, որ դա թերևս մեր վերջին տեսակցությունն էր կամ, համենայն դեպս, երկար ժամանակ պիտի բաժանվեինք, սակայն ոչ մի կերպ չէի կարողանում ոչինչ ասել, զգում էի իմ կատարյալ անօգնականությունը: Նա ասաց. «Ծիւիւր, եթե ուզում ես...» — «Բայց չէ՞ որ դու չես սիրում», — պատասխանեցի: — «Ոչ, հիմա միևնույն է, — ասաց նա: — Եվ ինձ շամպայն տուր...»: Ես այնպէս ուրախացա, ասես դա իմ փրկությունն էր լինելու: Մի քանի րոպեում խմեցինք ամբողջ շիշը, նստեցի նրա կողքին ու սկսեցի համբուրել նրա ձեռները, ասելով, որ չեմ դիմանա նրա մեկնումին: Նա խառնշոտորում էր մազերս ու ցրված ասում. «Այո, այո... Ինչ դժբախտություն է, որ չեմ կարող քո կինը լինել... Ամեն ինչ և բոլորը մեր դեմ են, միայն, միգուցե, աստված է մեզ հետ... Ես սիրում եմ քո հոգին, սիրում եմ քո երևակայությունը... Թե նա ինչ էր ուզում ասել այս վերջին խոսքով, չգիտեմ: Նայեցի վերև, հովանոցի տակ և ասացի. «Նայիր, մենք այստեղ կարծես դամբարանում լինենք: Եվ ի՞նչ լուրջություն է»: Ի պատասխան նա միայն տխուր ժպտաց...

— Ժամը տասի մոտ ասաց, որ ուզում է ուտել: Տեղափոխվեցինք առջևի սենյակ: Սակայն նա քիչ էր ուտում, ես նույնպէս, ավելի շատ խմում էինք: Հանկարծ նա նայեց բերածս խորտիկներին և բղավեց. «Հիմար, անխելք, էլի ինչքան ես առել բերել: Մյուս անգամ չհամարձակվես այդպէս անել»: — «Բայց հիմա ե՞րբ է լինելու այդ մյուս անգամը» — հարցրի ես: Նա տարօրինակ նայեց ինձ. գլուխը կախ գցեց, աչքերը թոցրեց ճակատին: «Տե՛ր աստված,— շնջաց նա,— մենք ի՞նչ, ի՞նչ անենք: Օ՛հ, սարսափելի ուզում եմ քեզ: Գնանք, շո՛ւտ:

— Որոշ ժամանակ անց նայեցի ժամացույցին, արդեն ժամը երկուսն էր: — «Օյ, ինչ ուշ է,— ասաց նա: — Հարկավոր է հենց այս րոպեին տուն գնալ»: Սակայն նա նույնիսկ չբարձրացավ տեղից և ավելացրեց. «Գիտես, զգում եմ, որ պետք է մեկնել ինչքան կարելի է շուտ, բայց տեղիցս չեմ կարողանում շարժվել: Զգում եմ, որ դուրս չեմ գալու այստեղից: Դու իմ ճակատագիրն ես, իմ բախտը, աստծու կամքը...»: Եվ դա ես չէի կարողանում հասկանալ: Հավանաբար նա ուզում էր ասել մի բան, որ կապ ուներ նրա հետ, ինչ գրել էր հետո. «Մահանում եմ ոչ իմ կամքով»: Կարծում եք, այդ գրածով ուզում էր արտահայտել իր անօգնականությունը իմ նկատմամբ: Իսկ իմ կարծիքով նա ուրիշ բան էր ուզում ասել, որ մեր երկուսի դժբախտ հանդիպումը ճակատագիր է, աստծու կամքը, որ նա մահանում է ոչ իր կամքով, այլ աստծու կամքով: Ի դեպ, այն ժամանակ ես առանձին նշանակություն չտվեցի նրա խոսքերին, վաղուց արդեն ընտելացել էի նրա տարօրինակություններին: Հետո նա հանկարծ ասաց. «Մատիտ ունե՞ս»: Ես նորից զարմացա. մատիտն ինչի՞ն է պետք: Սակայն շտապեցի տալ իրեն. մատիտը մոտս էր, ծոցատետրումս: Նա խնդրեց տալ իրեն և այցետոմսս: Երբ սկսեց ինչ-որ բան գրել այցետոմսիս, ասացի. «Լսիր, բայց

անհարմար բան է իմ այցետոմսի վրա երկտողեր գրել»։— «Ոչ, սրանք հենց այնպես, գրառումներ են ինձ համար,— պատասխանեց նա։— Թող ինձ մտածեմ և մի քիչ ննջեմ»։— Եվ գրոտած այցետոմսը դնելով կրծքին, աչքերը փակեց։ Տիրեց այնպիսի լռություն, որ ես մի տեսակ անզգայացած վիճակի մեջ ընկա...

— Այդպես անցավ հավանաբար ամենաքիչը մի կես ժամ։ Հանկարծ նա աչքերը բացեց և սառն ասաց. «Մոռացել էի, ես եկել էի քո մատանին վերադարձնելու։ Դու ինքդ երեկ ուզում էիր ամեն ինչ վերջացնել»։ Եվ տեղից բարձրանալով, մատանին նետեց պատի ելուստին.— «Եվ դու ինձ սիրո՞ւմ ես,— գրեթե բղավեց նա։— Չեմ հասկանում, ինչպե՞ս կարող ես հանգիստ թողնել, որ ես շարունակեմ ապրել։ Ես կին եմ, ես համարձակություն չունեմ։ Ես մահից չեմ վախենում, վախենում եմ տանջանքներից, բայց դու կարող էիր մի կրակոցով վերջ տալ ինձ, հետո ինքդ քեզ»։— Եվ այդ ժամանակ ես ավելի լավ, զարհուրելի հստակությամբ հասկացա մեր վիճակի ողջ սարսափը, անելանելիությունը, և որ այն ի վերջո պետք է մի լուծում ստանա։ Բայց նրան սպանել՝ ոչ, զգում էի, որ այդ չեմ կարողանա։ Եվ զգում էի ուրիշ բան. հասել է վճռական պահը ինձ համար։ Վերցրի ատրճանակն ու հրահանք քաշեցի։ «Ինչպե՞ս, միայն քե՞զ,— բացականչեց նա տեղից թռչելով.— Ոչ, երդվում եմ Հիսուսով, ոչ մի դեպքում»։— Եվ ատրճանակը խլեց ձեռքիցս...

— Ու նորից սկսվեց տառապալից լռությունը։ Ես նստել էի, նա պառկել էր, չէր շարժվում։ Հանկարծ անհասկանալի, քթի տակ ինչ-որ բան ասաց լեհերեն, ապա դարձավ ինձ.— «Ինձ տուր մատանիս»։ Տվեցի։ «Քոնն էլ»,— ասաց նա։ Շտապեցի կատարել և այդ։ Նա իր մատանին դրեց մատին, ինձ էլ կարգադրեց իմս դնել և խոսեց. «Ես քեզ միշտ սիրել եմ և հիմա էլ սիրում եմ։ Ես քեզ գովացրել եմ և տանջել, բայց բնավորությունս է այդպիսին ու այդպիսին է մեր ճակատագիրը։ Ինձ տուր շրջագգեստս ու ինձ համար պորտեր բեր...»։ Շրջագգեստը տվեցի իրեն և գնացի պորտեր բերելու, իսկ երբ վերադարձա, տեսա կողքին դրված է փփռոնով սրվակ։— «Լսիր,— ասաց նա վճռաբար։— Հիմա արդեն վերջ կատակերգություններին։ Դու առանց ինձ կարո՞ղ ես ապրել»։ Պատասխանեցի՝ ոչ։— «Այո,— ասաց նա,— ես վերցրել եմ քո ողջ հոգին, քո բոլոր մտքերը։ Դու չե՞ս տատանվի քեզ սպանել։ Իսկ եթե այդպես է, ինձ էլ հետո տար։ Ես էլ առանց քեզ կյանք չունեմ։ Եվ ինձ սպանելով, դու կմեռնես այն գիտակցությամբ, որ ես վերջապես ամբողջապես քոնն եմ, հավետ։ Իսկ հիմա լսիր իմ կյանքը...»։ Եվ նա նորից պառկեց ու, մի բուրբի չափ լռելուց և խաղաղվելուց հետո, սկսեց անշտապ պատմել ինձ իր կյանքը մանկությունից սկսած... Ես գրեթե ոչինչ չեմ հիշում այդ պատմությունից...

14

— Չեմ հիշում և այն, թե մեզնից ով ավելի շուտ սկսեց գրել... Ես մատիտը երկու կես արեցի... Սկսեցինք գրել և գրում էինք շարունակ լուռ։ Ես, կարծեմ, գրեցի նախ և առաջ հորս... Դուք հարցնում եք, ինչո՞ւ էի նրան կշտամբում, որ «չէր ուզում իմ երջանկությունը», երբ ոչ մի անգամ փորձ իսկ չէի արել նրա համաձայնությունն առնելու այդ ամուսնության համար։ Չգիտեմ... Չէ որ նա, միևնույն է, չէր համաձայնվի... Հետո գրեցի համագնդեցիներին, հրաժեշտ տվեցի նրանց... Հետո, էլ ո՞ւմ... Գնդի հրամանատարին,

նրա համար, որ ինձ օրինավոր թաղում անեն: Ասում եք. կնշանակի ես վստահ էի, որ ինքնասպանություն եմ գործելու: Իհարկե: Բայց ինչո՞ւ, համենայն դեպս, այդ բանը չարեցի: Չգիտեմ...

— Իսկ նա, հիշում եմ, գրում էր դանդաղ, կանգ առնելով և ինչ-որ մտածելով, գրում էր մի բառ, աչքի տակով նայում պատին... Գրությունները պատռտել էր նա ինքը, ոչ թե ես: Գրում էր, պատռտում ու շարտում ուր պատահի... Ինձ թվում է, որ գերեզմանում էլ այնպես սարսափելի չի լինի, ինչպես երբ մենք այդ ուշ ժամին, այդ լռության մեջ, այդ լապտերի տակ գրում էինք բոլոր այդ ավելորդ երկտողերը... Նրա կամքն էր դա գրելը: Ես ընդհանրապես անխոս և հնազանդ կատարում էի այն ամենն, ինչ նա հրամայում էր ինձ այդ գիշեր, ընդհուպ մինչև ամենավերջին պահը...

— Հանկարծ նա ասաց. «Բավական է: Ու թե պիտի անենք, ուրեմն շուտ անենք: Տուր ինձ պորտերը, օրհնիր ինձ, մայր աստվածածին»— Ես նրա բաժակը պորտեր լցրեցի և նա, կիսաբարձրանալով, վճռաբար դրա մեջ լցրեց մի պտղունց փփոնի փոշի: Կեսից ավելին խմելով, նա կարգադրեց ինձ խմել մնացածը: Խմեցի: Իսկ նա սկսեց անհանգիստ շարժումներ անել և, ձեռքերս բռնելով, սկսեց խնդրել: «Իսկ հիմա սպանիր ինձ, սպանիր: Սպանիր հանուն մեր սիրո»:

— Ինչ կերպ ես այդ արեցի՞: Կարծեմ գրկեցի նրան ձախ ձեռքով, այդ, իհարկե՝ ձախ, և շրթունքներս հպեցի նրա շրթունքներին: Նա ասում էր. «Մնաս բարով, մնաս բարով... Թե՞ ոչ, ողջույն, և հիմա արդեն առհավետ... Եթե չհաջողվեց այստեղ, ապա այնտեղ, վերևում...»: Ես սեղմվեցի նրան, մատս պահելով ատրճանակի ձգանին... Հիշում եմ, զգացի, ինչպես ցնցվեց ամբողջ մարմինս... Հետո կարծես մատս ձգեց ինքն իրեն... Նա հասցրեց ասել լեհերեն. «Ալեքսանդր, սիրեցյալս»:

— Ժամը քանիսի՞ն էր դա: Կարծում եմ, երեքին: Ի՞նչ էի անում դրանից հետո ես երկու ժամ: Բայց ես մի ժամի չափ քայլում էի մինչև Լիխարյովի մոտ հասա: Իսկ մնացած ժամանակ նստել էի նրա կողքին, հետո չգիտես ինչու կարգի էի բերում ամեն բան...

— Ինչու ինքս ինձ չխփեցի՞: Բայց ես մի տեսակ մոռացա այդ: Երբ տեսա նրան մահացած, մոռացա աշխարհում ամեն բան: Նստել ու միայն նայում էի նրան: Հետո նույն խելակորույս վիճակում սկսեցի կարգի բերել նրան և սենյակը...

Ես չէի կարող չպահել նրան տված խոստումս, թե իրենից հետո ինձ կսպանեն, սակայն վրաս մի կատարյալ անտարբերություն եկավ... Նույն անտարբերությամբ եմ վերաբերում և հիմա այն բանին, որ ապրում եմ: Բայց ես չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ ինձ դահիճ են համարում: Գուցեն մեղավոր եմ մարդկային օրենքների առաջ, մեղավոր եմ աստծու առաջ, սակայն նրա առաջ՝ ոչ: